


15706

Մ. ՄԱՐԿՈՎ

ՖԻՆԼԱՆԴԻԱ



ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳՐԱԳՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԷՐՈՏԱՐԹՎՁՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ ● 1940

Պրակտիկական բույս յերկրների, միացե՛ք

2512-09

26 SEP 2006

32(47.1) Մ. ՄԱՐԿՈՎ
Մ-36 W

ՖԻՆԼԱՆԴԻԱ

15106

25 .06. 2013



2542
40

М. МАРКОВ
ФИНЛЯНДИЯ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

Ֆինլանդական ժողովուրդը պայքարի յելավ իր դարա-
վոր իղձերն իրականացնելու համար: Ֆինլանդական Դե-
մոկրատական Հանրապետության դրոշի տակ հավաքվե-
ցին բազմաչարչար ժողովրդի լավագույն զավակները—
բանվորներն ու գյուղացիները: Խորհրդային ժողովրդի
քաջարի զավակներն ողնում են բարեկամ Ֆինլանդական ժո-
ղովրդին՝ յերկրից վռնդելու բռնակալներին ու դահիճնե-
րին—կայանդերներին, տաններներին, մաններհայմներին,
վորոնք իրենց իմպերիալիստական տերերի թելադրանքով
պատերազմ էյին նյութել ՍՍՀՄ-ի՝ ամբողջ աշխարհի աշ-
խատավորության հայրենիքի դեմ:

Ֆինլանդիայի պատմության մեջ նոր եջ է բացված:
Ժողովրդական կառավարությունը, վոր հենվում է աշխա-
տավորական ժողովրդական ճակատի վրա, ամբողջ աշխար-
հով մեկ հռչակեց Ֆինլանդիայի ազատությունն ու անկա-
խությունը: Ֆինլանդական ժողովուրդը կապիտալիստների
և կարվածատերերի՝ իրեն ատելի վերջին կառավարության
դեմ մղած հերոսական մարտերում ձեռք է բերում յերջանիկ
և ուրախ կյանքի իր իրավունքը:

Խորհրդային Միության համագործակցությունը Ֆին-
լանդիայի հետ ամրացված է Խորհրդային Միության և
Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետության միջև
կնքված փոխադարձ ողնություն և բարեկամության պայ-
մանագրում: Բարեկամ ժողովուրդներին համերաշխության
նոր կապերով է միացնում պայքարը: Նրանք համատեղ ջան-
քերով վերացնում են պատերազմի վտանգավոր ոջախը,
ճանապարհ են մաքրում ժողովրդական տնտեսության,
կուլտուրայի ծաղկման համար, Ֆինլանդական ժողովրդի
զարավոր ազգային իղձերն իրականացնելու համար:

վոչ, հերոսները չեն մեռել,
Կալեվի ժողովուրդը չի կոր-
ծանվել:

«Կալեվալա», յերդ 47:

Յեղ սկսեմք լավագույն յեր-
գերից:

«Կալեվալա», յերդ 1:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՆՑՑԱԼԻՑ

Յեվրոպայի հյուսիսում գտնվում է մի վոչ-մեծ յեր-
կիր—Ֆինլանդիան, վորի ավերը վողողվում են Մառուցյալ
ովկիանոսի ու Բալթիկ ծովի ջրերով: Հիմք կա յենթադրե-
լու, վոր Ֆինները բնակություն են հաստատել ներկա Ֆին-
լանդիայի շրջաններում դեռ IV—V դարերում: Ութ հարյու-
րամյակից հետո Շվեդիան, վոր այն ժամանակ ռադմական
ուժեղ պետություն էր, նվաճեց Ֆիննական ցեղերին և մի-
քանի հարյուրամյակների ընթացքում պահպանեց նրանց
վրա իր տիրապետությունը:

Շվեդական տիրապետության ամբողջ պատմությունը
լեցուն է Ֆիննական գյուղացիական ապստամբություններով
ոտարերկրացիների լծի դեմ: Դրանցից ամենից ավելի խո-
շորը գյուղացիական այն շարժումն է, վորը պատմության
մեջ ստացել է «գաղանակի կռիվ» («ՎՈՅՆԱ ԴՍՅՈՒՆ») անու-
նը: Այդ ապստամբության գլուխը, վորը տեղի յե ունեցել
1596 թ., կանդնած էր Յակկո Իլկկան:

Ապստամբությունն ընդգրկել էր դրեթե ամբողջ յերկի-
րը: Ժողովուրդը պայքարի յեր դուրս յեկել ատելի բռնա-
կալների դեմ, վորոնք վոտնահարում էլին նրա սրբազան

¹ «Կալեվալա» — Ֆիննական հայտնի եպոս, վոր 1835 թ. հրատա-
րակել է Ֆիննական գիտնական Լենրոտը, կազմելով ժողովրդական եպի-
կական ու վերիկ յերգերից: Մ. Բ.:

իրավունքները: Թալ անտառներում հնչեց Իլիկայի—ժողովրդազական հերոսի հզոր կոչը: Մահակներով գինեմած իր ջոկատները նա տանում էր ասպետների մարտական շարքերի վրա, վորոնք վոտից—վոտիս պարիակնված էլին յերկաթի մեջ: Իլիկայի բանակը այրում էր աղնակալանների կարվածքները, դատաստան էր տեսնում կեղեքիչների հետ: Նոկիա գյուղում, Տամմերֆորսի (այժմ Տամպերի) մոտ, ապստամբ գյուղացիների գլխավոր ջոկատներն ընդհարվեցին Ֆլեմմինգի—չվեդական Ֆեոդալների առաջնորդի զորքերի հետ: 1597 թ. հունվարի 2-ին այստեղ տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ: Խորամանկուժյամբ և խոստումներով բռնակալ Ֆլեմմինգին հաջողվեց պատակակել գյուղացիներին: Ապստամբների բաժան—բաժան յեղած ջոկատներն անողորմ կերպով մոհնչացվեցին: Բայց Փիննական գյուղացիությունը նորից է վոտքի յեխում: Չորսհազարանոց զորախումբը, վորին ղեկավարում էր Գաննու Կրանկան, ունեցավ նույն ճակատագիրը: Ֆլեմմինգը դաժան դատաստան տեսավ Փիննական ժողովրդի ազատասեր զավակների հետ: Մանտավուորիում սրախողիտող արվեցին ավելի քան 3 հազար ապստամբներ: Յակիո Իլիկան մահապատժի յենթարկվեց:

Հերոս Իլիկան մնաց ժողովրդի հիշողության մեջ:

Սիրազործությունների համար
Բուրն եւ վառքով չեն մխիթարվում:
Շատերին կախաղան էլ է սպասում...
Յեւ Իլիկային էլ կտեսցին:
Բայց ընդմիջ հիշելի կմնան
Նրա խոտքերը ժողովրդին՝
«Լավ է կյանքը վերջացնել մահողակում,
Քան թե կորցնել ազատությունը»:

XVIII դարում Փիննանդիան, գտնվելով կարևորագույն առևտրական ծովային ճանապարհի վրա, դառնում է ռազմական ընդհարումների պլացդարմ Շվեդիայի ու Ռուսաստանի միջև: Ռուսաստանը յեւք էր փնտռում ղեկի ծովը:

Հյուսիսային պատերազմի արդյունքը յեղավ այն, վոր 1721 թ. Նիշտադտյան հաշտությամբ Շվեդիան զիջեց Ռուսաստանին Փիննանդիայի մի շարք պրովինցիաները: Ռուսաստանի և Շվեդիայի միջև ծագած յերկրորդ պատերազ-

մը, վորը ծավալվեց 1741—1743 թ. թ., Ռուսաստանինոր տերիտորիաներ տվեց: Վերջապես, 1808—1809 թ. թ. ռուս-չվեդական պատերազմի հետևանքով Շվեդիան զիջեց Ռուսաստանին ամբողջ Փիննանդիան, Ալանդական կղզիները և արևմտյան Ոստրոբոտնիայի մի մասը: Փիննանդիան միացվեց Ռուսաստանին ինչպես «մեծ իշխանություն», ճիշտ է՝ սահմանադրական կարգի, մասնավորապես տեղական սեյմի, պահպանումով:

Փիննական ժողովրդի տառապանքները չվերջացան նաև այն ժամանակ, յերբ ամբաղնված Ռուսաստանը զավթեց Փիննական յերկիրը:

XIX դարի սկզբում Փիննանդիան բռնվեց գյուղացիական ապստամբությունների ալիքով: Խոշորագույն յերևութներ տեղի ունեցան Վիրորդի նահանգում: 1817 թ. ապրիլի 29-ին գեներալ-լեյտենանտ Դեմիդովը հրաման ստացավ գլխավոր շտաբի պետ իշխան Վոլկոնսկուց Վիրորդից (այժմ Վիպուրի) անմիջապես մի դումարտակ ուղարկելու Կեկս-հոլմի դավառը, Ռաուտուս կիրխշտիլը, «վերջ տալու այստեղի գյուղացիների խռովություններին»: Միաժամանակ գվարդիական կորպուսի հրամանատար կոմս Միլորադովիչին հրամայված էր ուղարկել 50 յեյր-ուրայցիներ՝ ողնելու քաղաքացիական իշխանություններին Կիվինբեր կիրխշտիլում գյուղացիներին հնազանդեցնելու գործում: Միլորադովիչին թուլյատրված էր զենք գործադրել:

Փիննական գյուղացիության թշվառ վիճակը ստիպված էր խոստովանել նույնիսկ Փիննանդիայի կառավարիչը: Փիննանդիայի գեներալ-նահանգապետ կոմս Բերգը 1850 թ. մինխտր պետական-քարտուղար գրաֆ Արմֆելդին գրած նամակում հաղորդում էր. «Փիննանդիայում ինձ հայտնի յեն տեղեր, վորտեղ Փիննական ազգաբնակչության հարաբերական ու չարարկման վրա հիմնված ստրկությունը հաճախ ավելի ծանր է, քան հողային ճորտական կախվածությունը Ռուսաստանում»:

Յարական ինքնակալության տիրապետության դարաշրջանը, չվեդական լծի դարաշրջանի պես, մի մուայլ եջ էր Փիննական ժողովրդի պատմության մեջ: Վորոչ ժամանակ ցարիքը Փիննանդիայում «լիրերալ» քաղաքականություն

եր վարում: Նրան սահմանադրութուն «չնորհելով», նա հետապնդում էր «Ֆինլանդացիներին, չվեղական թաղավորի նախկին հպատակներին իր կողմը դրավելու...»¹:

Ամբողջ XIX դարի ընթացքում Ֆինլանդիան, իր սահմանադրութւան հիման վրա, ոգտվում էր վորոչ «ազատութւուններով»: Սակայն նման «ազատութւունները», վորքան էլ դրանք սահմանափակված լինեյին, կոպիտ կերպով հակասում էյին ցարական ինքնակալութւան սկզբունքներին: Յարական կառավարութւունը բռնել եց Ֆինլանդիային ուսասցնելու ուղին: Ռուսական լեզուն հայտարարված էր պաշտոնական լեզու: Ֆինլանդիայի գլխին տեղացին «ամենավորորժած» մանիֆեստներ ու հրովարտակներ, վորոնք ցույց էյին տալիս, վոր ցարական ինքնակալութւունը յերբեք չի ուղղում կյանքում կիրառել նրանց կեղծավորարար հայտարարված «ազատութւունները»:

Յարկովի առաջին հարկածը 1899 թ. փետրվարյան ամսրահոչակ «մանիֆեստն» էր:

«Այն բանից հետո,—դրում էր Լենինը,—յերբ ծախու ու սողացող մամուլը յերկար ժամանակ հալածում էր Ֆինլանդիային, հրատարակվեց 1899 թ. փետրվարի 3 (15)—ի «մանիֆեստը», վորը սահմանում էր նոր կարգեր. առանց սեյմի համաձայնութւան կարող են հրատարակվել որենքներ, «յեթե դրանք վերաբերում են համապետական. պահանջներին կամ կապ ունեն կայսրութւան որենադրութւան հետ»:

Սահմանադրութւան մի աղաղակող խախտում էր այդ, իսկական պետական հեղաշրջում, վորովհետև չե՞ վոր ամեն մի որենքի մասին կարելի յե առել, թե դա վերաբերում է համապետական պահանջներին»²:

Ճնշման, բռնութւան և հնազանդեցման ցարական քաղաքականութւունը հալանութւունը դտավ միայն Ֆիննական ռեակցիոն, ծախու բուրժուազիայի կողմից: 1899 թ. փետրվարյան «մանիֆեստը» Ֆինլանդիայում համաժողովրդ-

դական վրդովմունք առաջացրեց: 1901 թվին, յերբ հրատարակվեց զինվորական նոր որենքը, վորը Ֆինլանդիայում համառուսական զինապարտութւուն էր մտցնում, մոտ կես միլիոն Ֆինն ստորադրեցին Ֆինլանդական սեյմին ուղղած ուղեբժին՝ ցարին հանձնելու համար: Այդ ուղեբժում Ֆիններն իրենց բողոքն էյին հայտնում Ֆինլանդական ժողովրդի իրավունքները խախտելու դեմ: Այդ ուղեբժը Լենինն «ամբողջ ժողովրդի ձայն»¹ անխանեց: Պետք է հիշեցնել, վոր այն ժամանակիս Ֆինլանդիան 2,5 միլիոն բնակիչ ուներ:

Ֆինլանդական արդյունաբերութւան վերելքի կապակցութւամբ XIX դարի վերջում նկատվում է արդյունաբերական պրոլետարիատի արագ աճում: 1905 թվին յերկրում կար ավելի քան 107 հազար արդյունաբերական բանվոր: Գտան տարվա ընթացքում Ֆինլանդիայում բանվորներ թիվն աճեց ավելի քան յերեք անգամ: Հենց այդ ժամանակներում յերկրում կային ավելի քան 100 հազար մանր գյուղատնտեսական վարձակալ-տորպարներ, վորոնք ունեյին կես հեկտարից պակաս հող: Նրանց դրութւունն այնքան ծանր էր, վոր կարող էր համեմատվել ճորտերի վիճակի հետ միայն:

Ֆիննական բանվորներն ու տորպարները, վորոնք յենթարկվում էյին դաժան շահագործման, գուրկ էյին քաղաքական իրավունքներից, հաճախ սպաքարի էյին դուրս գալիս իրենց շահագործողների դեմ: 1905—1906 թ. թ. տեղի ունեցան տորպարների ու բանվորների մի շարք խոշոր դործադուլներ:

Ռուսաստանում 1905 թ. հոկտեմբերյան գործադուլը Ֆինլանդիայում ջերմ արձագանգ դտավ: 1905 թ. հոկտեմբերի 30—ին Ֆինլանդական բանվորները, վորոնք ջերմորեն վողջունեցին ռուսական հեղափոխութւունը, ընդհանուր գործադուլ հայտարարեցին:

Հելսինգֆորսում (այժմ Հելսինկի) տեղի ունեցած բազմահազարանոց միտինգներից մեկում ընդունվեց հետևյալ բանաձևը.

¹ Ленин, т. IV, стр. 337.

² Նույն տեղում, էջ 338:

¹ Ленин, т. IV, стр. 335.

«Մրտադին սրաչտպանելով այժմ Ռուսաստանում հանուն ազատութեան և մարդկային իրավունքները տեղի ունեցող հոխիւր, ժողովը բոլոր բանվորներին ընդհանուր դործադուլի կոչ է անում»:

Ֆինլանդիայում ամբողջ կյանքը կանգ առավ: Գնացքները կանգնեցին, դործարանները դադարեցին աշխատելուց, թերթերը լույս չեկին տեսնում, կապի միջոցները խզվեցին: Գործադուլը մի շարաթ տևեց:

Ֆինլանդիայի խոշորագույն քաղաքներում ամբողջ իշխանութունն անցավ այդ սրերում կազմակերպված կարմիր զվարդիայի ձեռքը: Աճեց հեղափոխական շարժումը դյուղում: Ֆինլանդական ինտելիգենցիայի առաջագեծ մասը, վորն ատում էր ցարական ճնշումը, սրաչտպանում էր բանվորներին ու տորպարներին:

1906—1907 թ. թ. Հելսինգֆորսում մեծ աշխատանք կատարեց բոլշևիկյան ղեկավարական կազմակերպությունը: Նրա ղեկավարութեամբ 1906 թ. հուլիսին բռնկվեց Սվեաբորդ ամբոցի ծովազնացների հերոսական ապստամբութունը: Ապստամբութեանը մասնակցում էին մի քանի հարյուր ֆիննական կարմիր-զվարդիականներ:

«Ձեկվորները Սվեաբորդում ապստամբեցին, — ասվում էր ՌՄԴԿ Պետերբուրգի կոմիտեյի ղեկումի մեջ:— Ռուսաստանի լավագույն ամբոցներից մեկը գտնվում է ազատ և ազատութեան համար կռիւղ դրքի ձեռքում: Այդ ամբոցի ղեկին ծածանվում է կարմիր դրոշը: Ապստամբութեանը մոտ են նաև Ռուսաստանի ուրիշ կայսրորդներ, վորոնք դեռ չեն կարողացել իմանալ Սվեաբորդի ղեկվորական ապստամբութեան հաղթանակի մասին...»

Մենք չենք կարող լուռ դիտել այն բանը, թե ինչպես պատրաստվում են մեր լավագույն ընկերների սպանութուններն ու գնդակահարութունները... Ընկերներ, մեր ամբողջ ուժով սրաչտպանե՛ք Սվեաբորդում ազատութեան համար սլաքարող մարտիկներին»¹:

Ցարական դահիճները Ֆինլանդական բուրժուազիայի ախախտ ողնութեամբ ապստամբութեանը դաժանորեն ճնշեցին: Ռազմա-դաշտային դատարանը կայացրեց 51 մահվան դատավճիռ, ավելի քան հազար մարդ դատապարտվեցին տաժանակիր աշխատանքներին:

Ռուսական առաջին հեղափոխութեանը Ֆինլանդիայի ու Ռուսաստանի բանվոր դասակարգին առհասկա հարգատ դնրձրեց: «Вестник казармы» բոլշևիկյան թերթն այն ժամանակ գրում էր.

«Սվեաբորդում ուսանելի հետ կողք-կողքի կրվում էին, միատեղ արյուն թափելով, նաև կարմիր զվարդիայի ֆիննական բանվորները: Նրանք՝ ազատասեր ու հպարտ, ինչպես և ամբողջ աշխարհի պրոլետարները, Սվեաբորդի ընկերների հետ միասին յեղբայրաբար կռվում էին ընդհանուր վոխերիմ թշնամու՝ համառուսաստանյան ցարական ինքնակալութեան և ճնշման դեմ»¹:

Ռուսական առաջին հեղափոխութեան տարիներին Ֆինլանդիա յեկավ Վլադիմիր Իլյիչ Լենինը: Ֆինլանդիայի վրայով էր անցնում հեղափոխական գրականութեան տրանսպորտը: Այստեղ ռուսական հեղափոխական կազմակերպութունների համար գեներ էր գնվում: «Пролетарий» թերթը, վոր խմբագրում էր Լենինը, 1906—1907 թ. թ. անդալ կերպով տպագրվում էր Վերբորդում: Ֆինլանդիայում կայացան մի շարք համառուսական կուսակցական կոնֆերենցիաներ, վորոնց մասնակցում էր Վլադիմիր Իլյիչը: Տամմերֆորում, 1905 թ. դեկտեմբերին, կուսակցական կոնֆերենցիայում առաջին անգամ հանդիպեցին Լենինն ու Ստալինը:

Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին ճնշումներն ու տեղորդ ֆինն ժողովրդի դեմ մասսայական բնույթ ընդունեցին: Յերկրի տնտեսական դրութեանը վատացավ: Գյուղատնտեսական մթերքների գները բարձրացումն առաջացրեց հողի գները բարձրացում և հողի սպեկուլացիա: Ռեժեղացավ դյուղի շերտավորման սրոցեսը:

¹ «Листовки петербургских большевиков 1902 — 1917 г. г.», стр. 411—412. Госполитиздат, 1939 г.

¹ «Красная летопись» № 4 за 1922 г.

Տորպաների դրուժյունը սպառնալի դարձավ: Աշխատա-
վորների մեջ ստեղծված դժգոհությունը հասցրեց մասսա-
յական դործադուլների, վոր ճնշվում էլին զինված ուժով:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը Ֆինլան-
դիային ինքնուրույնություն չտվեց:

«Յարիցմի մոջնչացումը և բուրժուազիայի՝ իշ-
խանության գլուխ անցնելը,—գրում էր ընկեր Ստա-
լինը «Հոկտեմբերյան հեղաշրջումը և ազգային հար-
ցը» հոդվածում,—չհանդեպրին ազգային ճնշման վո-
չընչացման: Ազգային ճնշման հին կոպիտ ձևը փոխ-
վեց ճնշման նոր, նրբին, բայց դրա փոխարեն ավելի
վտանգավոր ձևով: Լվով—Միլյուկով—Կերենսկու
կառավարությունը վոչ միայն չխցեց իր կապերն ազ-
գային ճնշման քաղաքականությունից, այլև կազմա-
կերպեց նոր արշավանք ընդդեմ Ֆինլանդիայի (սեյմի
ցրումը 1917 թ. սամառը) ...»¹:

Հեղափոխական կրիզիսն աճում էր որ—որի վրա: Ֆին-
լանդիայի և Ռուսաստանի միջև յեղած փոխհարաբերու-
թյունների ու անկախության հարցը որվա գլխավոր քաղա-
քական խնդիրը դարձավ: Անկախության ձգտումն սկսեց
արագ կերպով տարածվել Ֆինն բանվորների ու դյուզացի-
ների մեջ:

Բուլչեիկյան «Волна» թերթն այդ ժամանակ գրում էր.

«Ֆինլանդական պրոլետարիատը յեղբայրական
ուռու ժողովրդի հանդեպ թշնամություն չունի: Նա
ատում է բոլոր նրանց, ովքեր ազգային ատելություն
են սերմանում: Նա անկեղծորեն հույս ունի, վոր
բարեկամական ու բեղմնավոր փոխանակություն տե-
ղի կունենա Ֆինն և ուռու ժողովրդի միջև»²:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխու-
թյունից մի քանի որ հետո, նոյեմբերի 13—ին, Ֆինլանդիա-
յում ընդհանուր դործադուլ սկսվեց: Զինված բանվորները

¹ Ստալին, Մարքսիզմը և ազգային դադութային հարցը, էջ 84,
Հայկուսհրատ, 1938:

² «Волна» № 57 от 21 июня 1917 г.

կարմիր գվարդիայի ջոկատներ կազմակերպեցին: Յերկրի
մեծ մասում իշխանությունը փաստորեն անցավ բանվորնե-
րի ձեռքը: Պայքարի յեղանակն անհաղթանակ էր: Ժողովրդ-
դի—բանվորների ու դյուզացիների հաղթանակի համար
այդ ամենարարենդաստ ժամանակն էր: Սակայն, սոցիալ-
դեմոկրատական կուսակցության ղեկավարները վիժեցրին
ազատության ու անկախության համար սկսված ժողովրդա-
կան շարժումը:

Ընդհանուր դործադուլից հետո շուտով Հելսինգֆոր-
ում կայացավ Ֆինլանդիայի սոցիալ-դեմոկրատական կու-
սակցության համադումարը: Հեղափոխական բանվորների
ճնշման տակ համադումար հրավիրվեց բուլչեիկիների ներկա-
յացուցիչը: Համադումար յեկավ ընկեր Ստալինը:

Համադումարը վոչջունելով, ընկեր Ստալինը տվեց
Ռուսաստանի պրոլետարիական հեղափոխության մեծ նվա-
ճումների վառ պատկերը: Նա իրոսեց Ֆինն ժողովրդի ազատ
ինքնորոշման իրավունքի մասին և բացատրեց, թե բուլչե-
իկիների կուսակցությունն ինչպես և հասկացել Ֆինլան-
դիայի իսկական անկախությունը: Ընկեր Ստալինը Ֆիննա-
կան բանվորներին մասնանշեց իշխանության համար վճռա-
կան պայքար մղելու անհրաժեշտությունը:

«Յեվ յեթե ձեզ հարկավոր լինի մեր ոգնությու-
նը,—ասում էր ընկեր Ստալինը,—մենք կտանք յայն՝
յեղբայրարար ձեզ ձեռք մեկնելով:

Դրանում դուք կարող եք հավատացած լինել»¹:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխու-
թյունն ազատություն բերեց ցարական Ռուսաստանում
բնակվող բոլոր ժողովուրդներին: Պատմության մեջ առա-
ջին անգամ Ֆինն ժողովուրդն անկախ ու ազատ դոյության
իրավունք ստացավ:

1917 թ. դեկտեմբերի 31—ին Խորհրդային կառավարու-
թյունը ճանաչեց Ֆինլանդիայի անկախությունը:

Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի վորոշման մեջ,
վորն ստորագրել են Լենինն ու Ստալինը, ասված է.

¹ «Известия Гельсингфорского совета депутатов армии, флота
и рабочих» № 202 от 15 ноября 1917 г.

«Ֆինլանդական հանրապետութեան անկախութեանը ճանաչելու վերաբերյալ Ֆինլանդական կառավարութեան ղեկավարին ի պատասխան, Ժողովրդական կոմիտեաների Սորհուրդը, աղքերի ինքնորոշման սկզբունքների հետ լիովին համաձայն—վորոշում է:

Կենտրոնական Գործադիր կոմիտե առաջարկութեան մտցնել: —

ա) ճանաչել Ֆինլանդական հանրապետութեան պետական անկախութեանը և

բ) Ֆինլանդական կառավարութեան համաձայնութեամբ կազմակերպել հատուկ հանձնաժողով՝ յերկու կողմերի ներկայացուցիչներից, մշակելու համար այն պրակտիկ միջոցառումները, վորոնք բխում են Ֆինլանդիան Ռուսաստանից անջատվելուց...»¹:

1918 թ. հունվարի 4-ին Համառուսական ԿԳԿ-ն հաստատեց ՌԽՖՍՀ ԺԿՍ-ի վորոշումը:

Սորհրդային իշխանութեանը կամավոր կերպով Ֆինլանդիային տվեց լիակատար անկախութեան, վորը նրան Ռուսաստանի և վոչ մի իշխանութեան յերբեք չէր տա:

Իսոյք Ֆինլանդական բուրժուազիան, իշխանութեան իր ձեռքն անելով, արշավանք սկսեց հենց իր Ժողովրդի դեմ: Արդեն 1918 թ. հունվարին Ֆիննական սպիտակ-զվարդիականները, վորոնց ղեկավարում էր զինվորական ղեկատար Մաններհայմը, հարձակվեցին ռուսական զորքերի վրա: Նրանք կտրեցին հաղորդակցութեանը Պետրոգրադի հետ և սկսեցին Սորհրդային Կարելիայի դավթումը: Ֆինլանդիայի պրոլետարիատը զբան պատասխանեց հակահարձակով: Հունվարի 27—28-ին Կարմիր զվարդիայի զինված շոկատները զբավեցին Հելսինկիի կառավարական բոլոր հաստատութեանները: Ստեղծվեց աշխատավորների իշխանութեան — Ժողովրդական լիազորների Սորհուրդ: Սվինխուսվուզի բուրժուական կառավարութեանը փախալ հյուսիս՝ կուլակային շրջանները, Վաադա քաղաքը: Ֆիննական Ժողովրդի դահիճ Մաններհայմն այստեղ սկսեց սպի-

¹ «Собрание Указонений и распоряжений Рабочего и Крестьянского правительства» № 11, стр. 166, 1917 г.

տակ-Ֆինների շոկատներ կազմակերպել Ժողովրդական Ֆինլանդիայի դեմ հարձակվելու համար:

Այդ ժամանակ Կարմիր զվարդիայում կար մոտ 80 հազար մարդ: Նա բաղկացած էր զլիտալորապես բանվորներից ու տորպարներից: Նա զենքի և պարենավորման կարիք էր զգում: Կարմիր-զվարդիականները կռվում էին հերոսաբար, պաշտպանելով հողի յուրաքանչյուր թիղը: Մաններհայմը, վոր անապարծորեն հայտարարում էր, թե ինքը յերկու շաբաթվա ընթացքում կզբաւի արդյունաբերական կենտրոնները՝ Հելսինկին և Տամպերեն ու վերջ կղնի հեղափոխութեանը, դրանք գրավեց չորս ամիս տեղ ծանր ճակատամարտերից հետո, և այն ել ինտերվենտների սղնութեամբ միայն: Սպիտակ-զվարդիական բանակը պատերազմը վարում էր շոտենված դաժանութեամբ: Ապրիլին Մաններհայմի զորքերը ներխուժեցին Տամպերեն և քաղաքում արյունահեղ կոտորած սարքեցին: Ամբողջ յերկրում բանվորների դեմ դազանային դատաստան արվեց: 40 հազար աշխատավորների կախաղան բարձրացրին, զնդակահարեցին ու սրախողտող արին: Համակենտրոնացման ճամբարներում խոշտանղումներից ու սովից մահացան 15 հազար բանվորներ: Ֆինլանդական բուրժուազիան բանա նետեց 90 հազար մարդ, վորոնց թվում՝ շատ կանանց ու յերեխաների: Բնակչութեան 3%-ից ավելին դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի: Թե ինչպիսի կատաղութեան հասավ Ֆինլանդական բուրժուազիան, կարելի չէ դատել այն փաստի հիման վրա, վոր նրա ղեկավար շրջաններում լրջորեն քննվում էր հեղափոխական ղեկիներին արտասահմանում վաճառելու հարցը՝ սպիտակ-Ֆինլանդիային անհրաժեշտ հանքերի ու պարարտանյութերի հետ փոխանակելու կարողով:

Ֆիննական պրոլետարիատի ու տորպարների մղած պայքարը 1918 թվին վերջացավ կապիտալիստների ու կալվածատերերի հաղթանակով, վորոնք Ժողովրդական մատաներին ճնշելու դազանային սեժիմ սահմանեցին:

ԻՆՁ Ե ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՐԵՆԻՑ ՖԻՆԼԱՆԴԻԱՆ
ՏԵՐԻՏՈՐԻԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինլանդիան, վոր դանվում է ՌՍՀՄ-ից հյուսիսարևմուտք, ունի 388 հազար քառակուսի կիլոմետր տերի-

տորիա, վորն զգալիորեն ավելի յե Նորվեգիայից ու Իտալիայից և հավասար և Յապոնիայի դրամված տարածութեանը: Ինչոք բնակչութեան թիվով—3·834 հազար—Ֆինլանդիան հետին տեղերից մեկն և դրամով Յեվրոպայի պետութիւններէ մեջ: Բնակչութեան հիմնական մասսան սպրում և յերկրի հարավային մասում: Այստեղ, յերկրի կեսից մի քիչ ավելի տարածութեան վրա, կենտրոնացած և բնակչութեան ավելի քան 90%-ը:

Բնակչութեան մեծամասնութիւնը—մոտ 65%-ը՝ դրաղված և գյուղատնտեսութեան ու անտառային տնտեսութեան մեջ, 15%-ը—արդյունաբերութեան ու արհեստագործութեան մեջ, 7,7%-ը —տրանսպորտում, 3,9%-ը՝ առևտրի մեջ: Բնակչութեան հիմնական մասը՝ 88,7%-ը Ֆիններ են, վորոնք ներկայացնում են յերկու աղբութիւն—տալոտներ (բուն Ֆիններ) և կարելներ: Ֆինլանդիայում, բացի դրանից, ապրում են մոտ 410 հազար շվեդներ (11%), զլխավորապէս Ֆինլանդիայի հարավային ու արևմտյան մասերում և Ալանդական կղզիներում: Ռուսների թիվն և 14·600: Բնակչութեան մեծ մասը—մոտ 80%-ը—ապրում և գյուղերում:

Ֆինլանդիայի հյուսիսային ափերը վողոցում են Սառուցյալ ովկիանոսի, իսկ հարավային ու արևմտյան ափերը՝ Բալթիկ ծովի ջրերը: Արևելքից Ֆինլանդիան սահմանակից և ՆՍՀՄ-ի հետ, հյուսիսից ու հյուսիս-արևմուտքից Նորվեգիայի և Շվեդիայի հետ: Ֆինլանդիայի սահմանների ընդհանուր յերկարութիւնն և 4·685 կիլոմետր: Ֆինլանդիա—խորհրդային սահմանի յերկարութիւնն և 1·825 կիլոմետր, վորից 235 կիլոմետր կազմում և այն սահմանը, վորն անցնում և Լադոգա լճի վրայով: Ֆինլանդիայի ու ՆՍՀՄ-ի սահմանը Լադոգա լճից անցնում և անտառների, տունդրաների ու ճահիճների միջով, մինչև Սառուցյալ ովկիանոսի ափերը:

Ֆինլանդիայի առաինյա դժի յերկարութեամբ ձգված և ժայռոտ կղզիները—շխերների շղթան, վորոնք Բոտնիկյան ծոցի բերանի մոտ մոտենում են շվեդական ափերին, կազմելով Ալանդական արշիպելագը, վորը բաղկացած և ավելի քան 300 կղզիներից՝ մոտ 1·426 քառակուսի կիլոմետր ընդ-

հանուր տարածութեամբ: Ալանդական արշիպելագը Ֆինլանդիայի հարավ-արևմուտքի ծայր տիրապետութեան շրջանն և Բալթիկ ծովում: Բոտնիկյան ծոցի մուտքի մոտ գտնվելով, նա կարևոր ստրատեգիական նշանակութիւն ունի: Նորաբնակ Ալանդական կղզիները (30 հազար մարդ) արդյունաբերական նշանակութիւն չունեն և հանածոներով աղքատ են: Բնակիչների հիմնական զբաղմունքն և հողագործութիւնը, անասնապահութիւնն ու ձկնորսութիւնը: Արշիպելագի կղզիներից մեծագույնը՝ Ալանդը գրավում և 475 քառակուսի կիլոմետր տարածութիւն—1·500—2·000 բնակչութեամբ: Արշիպելագի միակ քաղաքն ու նավահանգիստը Մարինեդամնն և:

Ֆիննական ծոցի առավել խոշոր կղզիներն են՝ Սուուրսաարին (Գոդլանդ), Սեյսկարին, Լավանսաարին ու Տյուսերսաարին (Փոքր ու Մեծ) և Կոյվիստոն:


Ֆինլանդիան անտառների ու լճերի յերկիր է: Ավելի քան 35 հազար լճերի ու բազմաթիվ գետերի ջրային տարածութիւնը հավասար և յերկրի ամբողջ տերիտորիայի 12 ասոկոսին: Ֆինլանդիայի ջրվեժների ուժը վորոշվում և մոտավորապէս 3 միլիոն ձիու ուժ: Սակայն ջրային ենթագիան անբավարար և ոգտագործված արդյունաբերական նպատակների համար: Լճերից առավել խոշորներն են՝ Սայման, Պեյյանեն և Ինարին:

Ֆինլանդիայի գետերի մեծ մասը, վորոնք հարուստ են սահանքներով, զառիթափներով ու ջրվեժներով, աննախարկելի յեն և ոգտագործվում են զլխավորապէս փայտ փոխադրելու համար: Գետերից առավել նշանավորներն են՝ Վուուկսան, Տորնեոն և Կյուսմաենեն: Վուուկսա գետը, վորն սկիզբ և առնում Սայմա լճից, գոյացնում և Իմատրա հայտնի ջրվեժը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ,
ԿՈՒՆՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Ֆինլանդիան հիմնականում ազրարային յերկիր է:

Հողն այստեղ նվազ բերքատու յէ: Միայն առաինյա շրջանը, զլխավորապէս հարավայինը, պիտանի յէ հողագործութեան համար: Վարելահողերը կազմում են յերկրի ամ-



բողջ տերիտորիայի 7,3 տոկոսը: Յանքային տարածութեան անձն աննշան է. վերջին քսան տարիքս ընթացքում կազմել է միջին հաշվով տարեկան միայն 30 հազար հեկտար: Չնայած գյուղատնտեսութեան համար պիտանի հողերի աննշանութեանը, բնակչութեան յերկու յերրորդ մասը զբաղված է գյուղատնտեսութեամբ:

Լայազույն հողերը պատկանում են կալիքածատերերին ու կուլակներին: Այսպէս, մի կուլտ կալիքածատերեր ու կուլակներ, վորոնք հողի սեփականատերերի ընդհանուր թվի միայն 5,6 տոկոսն են կազմում, տիրում են ամբողջ հողի մոտ 40%-ին, իսկ չքաւոր տնտեսութեաններին, վորոնք կազմում են 39 տոկոսը, հասնում է հողի ընդամենը 6,5 տոկոսը: Մոտ 400 հազար գյուղացիներ բոլորովին չազդուրկ են:

Գյուղատնտեսական հիմնական կուլտուրաներն են հացարը, ցորենը, վարսակը, կարտոֆիլը: Յինլանդիայի սեփական հացը չի բաւականացնում, և նա ամեն տարի ներմուծում է յերկրի սպառման համար անհրաժեշտ հացարի 15—20 տոկոսը և ցորենի 30—40 տոկոսը: Յինլանդիայի գյուղատնտեսութեանը հաղիվ թէ ծածկում է յերկրի գարու ու կարտոֆիլի պահանջը:

Յինլանդիայի գյուղատնտեսութեան մեջ զբաւի տեղ է զբաւում անասնապահութեանը: 1937 թ. տվյալներով յերկրում կային 1925 հազար գլուխ խոշոր յեղջուրաւոր անասուններ: Գյուղատնտեսութեանը տալիս էր տարեկան մոտ 2·500 միլիոն կիլոգրամ կաթ, 50 միլիոն կիլոգրամ յուղ և 10 միլիոն կիլոգրամ պահիր: Մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը Յինլանդիայի յուղագործարանների ու պանրագործարանների զգալի մասը կաթնամթերքներ էր մատակարարում Ռուսաստանի հյուսիսային շրջաններին:

Յինլանդիայի անտառային հարստութեանները (անտառները բռնում են յերկրի ամբողջ տերիտորիայի 74%-ը) նպաստել են անտառային արդյունաբերութեան զարգացմանը, վորը գործում է գերազանցապէս էքսպորտի համար: Անտառային խոշոր մասսիւները, եթան հիդրոէներգիան, լատտառաքման համար հարմար զետային ճանապարհները, ծովափնյա ձեռնտու գիրքը՝ վորոշում էին անտառային ար-

դյունաբերութեան առաջատար նշանակութեանը յերկրի ժողովրդական տնտեսութեան մեջ: Բանվորների համարյա կեսը զբաղված են անտառային ու թղթի արդյունաբերութեան մեջ: Յինլանդիայում ամբողջ արդյունաբերական պրոլետարիատը կազմում է ավելի քան 200 հազար մարդ:

Ածուխ և նալթ Յինլանդիայում չկա: Յերկաթի հանքաքարի հանքերը գլխաւորապէս Լադոգա լճի ափերում են: Պիտկարանտում, լեռնագործարանային արդյունաբերութեան կենտրոնում, արդյունահանվում է պղինձ: Յինլանդիայում հայտաբերված են վոսկու, արծաթի, ցինկի, կապարի ու անագի հանքեր: Պետամոյի (Պեչենեգա) շրջանում կան նիկելի շատ մեծ պաշարներ: Հաշվում են, վոր Պետամոյն կարող է տալ տարեկան մինչև 3 միլիոն կիլոգրամ նիկել, ալիւմ, քան արծա տալիս է Յեվրոպայի վորեն յերկիրը: Յինլանդիայում արդյունահանվող զբանիտը, մարմարն ու շինարարական քարը հռչակված են համաշխարհային շուկայում:

Անտառային արդյունագործութեանը կազմում է ժողովրդական յեկամուտի հիմնական աղբյուրը և զերազանցում է հողագործութեան ու անասնապահութեան յեկամուտից՝ միասին վերցրած: Ամբողջ յերկիրը ծածկված է փայտամշակման գործարանների ցանցով: Անտառների զրեթե կեսը պատկանում է պետութեանը, մնացած մասը մասնավոր Փիրմանների ու տերերի սեփականութեան է:

Անտառային արդյունաբերութեանից հետո յերկրորդ տեղը զբաւում է թղթի-ցելլյուլոզի արդյունաբերութեանը: Յերկրում կան 28 ցելլյուլոզային և 23 թղթի Փարրիկաներ: 1935—1937 թ. թ. գործարկված ու կառուցվող ցելլյուլոզի Փարրիկաների կարողութեանը հասնում է ավելի քան 500 հազար տոննի:

Յինլանդիայի արդյունաբերական շրջանները գտնվում են հարաւային և հարաւ-արեւմտյան ափերում: Այստեղ կան մետաղագործական ձեռնարկութեաններ, թղթի Փարրիկաներ, փայտամշակման ու ցելլյուլոզի գործարաններ: Կյումմենե գետի հովտում գտնվում է Յեվրոպայում ամենախոշոր թղթի Փարրիկան:

Տեքստիլ արդյունաբերութեանը կենտրոնացված է Տամ-

պերե, Վառդա, Պորի (Բյերնեբորգ), Իսկ մետաղագործա-
կանը՝ Հելսինկի, Տուրկու (Աբո), Պորի քաղաքներում:
Տեքստիլ ձեռնարկուլթյունների համար հումուլթ են մատա-
կարարում Անգլիան ու ԱՄՆ-ը, մետաղագործարանների
համար հանքաքարը և մասամբ շուգունը՝ Շվեդիան: Մե-
քենաշինուլթյունը կազմում է ամբողջ մետաղագործական
արդյունաբերուլթյան ավելի քան 70 տոկոսը: Այստեղ գրադ-
ված են 30 հազարից ավելի բանվորներ:

Ֆինլանդիայի ժողովրդական տնտեսուլթյունը զարդա-
ցավ Անգլիայի, ԱՄՆ-ի և մասամբ Շվեդիայի կապիտալների
ներմուծման ողնուլթյամբ: Արդյունաբերուլթյունն ավելի ու
ավելի հարմարեցվում էր անգլիական շուկայի պահանջնե-
րին, և Ֆինլանդիայի արտաքին առևտուրը զգալի չափով
կախված էր Անգլիայից: Ֆինլանդիան Անգլիայի հետ կնքել
է հատուկ առևտրական համաձայնուլթյուն, վորով Անգլիա-
յին զգալի առաջելուլթյուններ են տրամադրվում Ֆինլան-
դական շուկայում:

Ֆինլանդիան զգալի դեր է խաղում համաշխարհային
շուկայում վորպես անտառանյուլթ, ցելլուլոզ, թուղթ,
թղթային մասսա, յուղ ու պանիր արտահանող: Անտա-
ռանյուլթի, թղթի ու թղթային մասսայի եքսպորտը ամ-
բողջ եքսպորտի 85%-ն է կազմում: Եքսպորտի ամենա-
զգալի մասը բաժին է ընկնում Անգլիային, Գերմանիային,
ԱՄՆ-ին ու Շվեդիային: Այսպես, անցյալում, 1938 թ. Ֆին-
լանդական եքսպորտն Անգլիա—հասավ 3.700 միլիոն ֆիննա-
կան մարկի, Գերմանիա—1.280 միլիոն մարկի, ԱՄՆ—773
միլիոն մարկի, Շվեդիա—ավելի քան 400 միլիոն մարկի,
ՆՍՀՄ—43,5 միլիոն մարկի: 1939 թ. առաջին կիտամյակում
Ֆինլանդական եքսպորտի ընդհանուր դումարը կազմում էր
3.719 միլիոն մարկ: Անցյալ՝ 1939 թ. տարվա առաջին կի-
տամյակում Ֆինլանդիան 3.970 միլիոն մարկ դումարի ապ-
բանք է ներմուծել: Զդալիորեն ավելացել է բամբակի, յեր-
կաթի հանքաքարի, թիթեղի, ածուխի, կոքսի, նավթա-
մթերքների ներմուծումը: Գլխավոր ներմուծողներն են՝
Անգլիան, ԱՄՆ-ը, Գերմանիան ու Հոլանդիան:

Ֆինլանդիայի արտաքին առևտրի հանրադումարները
խիստ անդուհացուցիչ էյին: Արտաքին առևտուրը 1939 թ.

առաջին վեց ամիսների ընթացքում 251 միլիոն մարկի դու-
մարով պասսիվ սալդո տվեց: Այդ, ամենից առաջ, բացա-
տրվում է եքսպորտի համար աշխատող արդյունաբերու-
լթյան արտադրանքի կրճատումով: Համախառն արտադրան-
քի արժեքը մեն-միայն 1938 թ. ընթացքում պակասեց Ֆին-
լանդիայի համար հսկայական—2 միլիարդ մարկ դումարի
չափով: 1939 թ. դուրսլթյունը չլավացրեց:

Կապիտալիստական մի շարք խոշորագույն յերկրներում
սկսված տնտեսարան կրիզիսը չեր կարող չանդրադառնալ
Ֆինլանդիայի ժողովրդական տնտեսուլթյան վրա: «Անտա-
րակույս, Ֆինլանդական եկոնոմիկայի առաջիկա զարգա-
ցումը,—զրում էր «Ֆինլանդական բանկի տեղեկատուն»,—
մեծ չափով կդառնվի համաշխարհային շուկաների աղբեցու-
լթյան տակ և դլխավորապես կախված կլինի ԱՄՆ-ի ու Ան-
գլիայի եկոնոմիկայի զարգացման ընթացքից»:

Յերկրի արդյունաբերական հիմնական կենտրոններն են՝
Հելսինկին, Տուրկուն, Տամպերեն, Կոտկան, Վաազան, Վի-
պուրին, Ուուլուն (Ուլեբորգ):

Հելսինկին Ֆինլանդիայի մայրաքաղաքն է, գտնվում է
Ֆիննական ծոցի հյուսիսային ափին, գրանիտյա թերակղզու-
վրա: Հելսինկին յեվրոպական քաղաք է գեղեցիկ նավա-
հանդատով, վորը գեղարվեստորեն դրկում է նրան Ժայռոտ
չխերների ողակով: Առանձնապես գեղեցիկ է քաղաքի կենտ-
րոնը՝ լայն, մաքուր փողոցներ, բազմահարկ տներ:

Հելսինկին յերկրի արդյունաբերական ու կուլուրական
կենտրոնն է (311 հազար բնակիչ ունի): Քաղաքի ճար-
տարապետական հուշարձաններն են կայարանի ու սեյմի
շենքերը: Քաղաքի բանվորական շրջանում—Մերեսում
կենտրոնացված են միքանի խոշոր ձեռնարկուլթյուններ՝
մեքենա— ու մոտորաշինական և այլ գործարանները:
Քաղաքում կան փայտամշակման, յերեք խոշոր նավաշինա-
կան ու կաշվի գործարաններ: Այստեղ կան նաև ոսգ-
մական նշանակուլթյուն ունեցող մի շարք գործարաններ ու
սերողրոմներ: Հելսինկի նավահանգիստն ունի յերեք չոր ու
յերկու յողուն նավաշինարաններ և միքանի հարմար նա-
վակայաններ: Հելսինկին Ֆինլանդիայի ուղմածովային նա-
վատորմի գլխավոր բազան է: Մայրաքաղաքում գտնվում է

հարուստ դրադարան ունեցող համալսարանը, Գիտություն-
ների ակադեմիան, Բարձրագույն տեխնիկական ուսումնա-
րանը, Աղշալին թանգարանը, Բուսաբանական այգին և մի
չարք այլ կուլտուր-լուսավորական հաստատություններ:

Վիպուրիմ յերկրի խոշորագույն քաղաքներից է, 82 հազար
բնակչությամբ: Այն անտառարտահանման խոշոր կենտրոնն
է: Քաղաքում կան մեխանիկական, էլեկտրո-տեխնիկական,
ձուլող գործարաններ: Վիպուրիմ գտնվում է Վերորդյան
ծոցի ափին և ջրանցքով միացված է Սայմոնյան լճային
վիթիսարի սխտեմի հետ, վորով մատչելի յե նավարկու-
թյունը ջրային այն ճանապարհներով, վորոնք մի քանի
հարյուր կիլոմետր թափանցում են յերկրի խորքերը:

Բոտանիկյան ծոցի ափին Աուբայի գետաբերանին գտնը-
վում է խոշոր արդյունաբերական ու առևտրական քաղաք ու
նավահանդիստ Տուրկուն:

Տուրկուն Ֆինլանդիայի նախկին մայրաքաղաքն է, հիմն-
ված է ավելի քան յերկու հարյուր տարի առաջ: Նա-
վարկելի գետի յերկու ափերին գտնվելով՝ քաղաքն ունի
չատ նավաշինական և մեքենաշինական ձեռնարկություններ,
մոտորային և այլ գործարաններ: Քաղաքն ունի 73 հազար
բնակիչ: Իր արտաքին տեսքով Տուրկուն դավառային քա-
ղաքի տպավորություն է թողնում: Այստեղ կառուցումների
մեծ մասը փայտյա, միահարկ և խունացած են: Փողոցները
կեղտոտ են ու փատ են սալարկված:

Տուրկունի նավաշինարանը յերկրի ամենախոշոր ձեռնար-
կություններից մեկն է: Այս նավաշինարանը ընդհուպ մին-
չև 1916 թ. կատարում էր ուսական ուղղման-ծովային դե-
րատեաչության պատվերները: 40 տարիա ընթացքում Ռու-
սաստանի համար այստեղ կառուցվեց 514 նավ: Այս նավա-
շինարանում կառուցված են Ֆինլանդիայի ուղղմանավերի
մեծ մասը, այդ թվում՝ «Վեյմեյնեն» ու «Իլմարինեն»
դրահանավերը, սուզանավեր և պահակային նավեր: Տուր-
կույում է գտնվում Ֆինլանդիայի ամենախոշոր չոր նավա-
շինարանը:

Տամպերեն տեքստիլ արդյունաբերության կենտրոնն է:
Այստեղ կենտրոնացված են յերկրի չթի ու մահուղի

Փարբիկաների մեծ մասը: Քաղաքում կան նաև բավականա-
չափ մետաղադրյունաբերության ձեռնարկություններ: Քա-
ղաքը գտնվում է յերկու լճերի նեղ պատվարի վրա, մեծ
կարողություն ունեցող ջրվեժի մոտ: Ջրվեժի ջրերը, վո-
րոնք արգելակված են յերեք շարք ամբարտակներով, եներ-
գիա յեն մատակարարում մի շարք խոշորագույն ձեռնարկու-
թյուններին—մանուֆակտուրային կոմբինատին, շոգեքարչա-
շինական գործարանին, չթի, թղթի և մահուղի Փարբիկա-
ներին: Չնայած այսպիսի բեռնավորման, ջրվեժի ջրային
եներգիան ողջագործվում է կեսից ավելի սրահաս չափով:
Տամպերեն ունի 74 հազար բնակիչ:

Կուոկա քաղաքը (ունի 21 հազար բնակիչ) անտառեքս-
պորտային կարևորագույն նավահանդիսաններից մեկն է:
Քաղաքում կան մի քանի ցելլուլոզային Փարբիկաներ:
Կուոկային մոտիկ գտնվում են ձուլող ու մեխանիկական
գործարաններ:

Վաագա քաղաքում (32 հազար բնակիչ ունի) գտնվում
են նավաշինական, մոտորային, շաքարի և ուրիշ գործա-
րաններ:

Ֆինլանդիան նավահանդիստային շինարարությամբ զար-
գացած յերկիր է: Ֆիննական ծոցի արևելյան անկյու-
նից սկսած մինչև Բոտնիկյան ծոցի հյուսիսային ծայրը
ձգված յերկար առափնյա գիծը, վորի տարածության մեծ
մասը խիստ կտրտված է ծովախորշերով ու խութածոցե-
րով, մի գիծ, վորը ծածկված է անթիվ վերջրյա ու ընդ-
ջրյա կղզի-չխերներով, բնական բարենպաստ պայման է
հանդիսանում նավահանդիստների համար: Ֆինլանդական
ափերին կա 25 ծովային նավահանդիստ: Դրանցից՝ Հել-
սինկին, Խանկոն (Գանդե), Վիպուրիմ, Կոսկան, Կոյվիստոն
(Բյեբկե) և ուրիշները գտնվում են Ֆիննական ծոցի ափե-
րին, Տուրկուն, Պորին, Վաագան, Ռուլուն և ուրիշները—
Բոտնիկյան ծոցի ափերին և չատչող Պետսալո նավահան-
դիստը—Մաուլեյյալ ովկիանոսի ափին:

Ֆիննական միջանի նավահանդիստների նշանակու-
թյունն ուժեղանում է նաև նրանց միացող ներքին ջրային
ճանապարհներով: Ամենից ավելի նշանավոր յերեք լճային
ախտեմներից (արևելքում՝ Սայմենի, կենտրոնում՝ Պեյենի

ու արևմուտքում՝ Նեսի-Յարվի) — առաջինը նավարկելի էս-
զորդակցություն ունի Ֆիննական ծոցի հետ Վիպուրիի մոտ
Սայմենյան ջրանցքի միջով, իսկ վերջին յերկուսը միացած
են ծովածոցի հետ՝ վոչ նավարկելի, բայց լաստաղնաց
Կյումմենե (Կոտկա քաղաքի մոտ) և Կումո (Պորի քաղաքի
մոտ) գետերով: Այդ պատճառով Վիպուրին, Կոտկան ու
Պուրին յերկրի առավել խոշոր անտառեքսպորտային նա-
վահանդիստներն են:

Խանկուն և Տուրկուն՝ Ֆինլանդիայի գլխավոր ձմեռա-
յին նավահանգիստներն են: Նավարկությունն այստեղ պահ-
պանվում է զրեթե ամբողջ տարվա ընթացքում: Խանկոյի
նավահանգիստը կարող է տեղավորել մի ամբողջ նավա-
տորմ: Այդ նավահանգստի ստրատեգիկ նշանակությունն
այն է, վոր նա հիանալի խարսխակայան է: Դեպի շատ հա-
րավ ձգվող թերակղզին, վորի վրա գտնվում է խանկոն,
կտրում է շխերների խիտ դոտին, վորը բնական արգելք է
ստեղծում թշնամու եսկաղբանների նավահանգիստ մտնելու
գեմ: Այստեղ 1714 թ. Հյուսիսային պատերազմի ժամանակ
տեղի ունեցավ նշանավոր Գանդուտյան ճակատամարտը,
յերբ ռուսական նավատորմը գլխովին ջախջախեց չվեդական
Ֆլոտիլիան: Պետրոս I-ը գանդուտյան հաղթանակը պոլ-
տալյանին հավասար էր համարում:

Լենինգրադին ամենամոտ նավահանգիստներն են՝ Կոյ-
վիստուն և Վիպուրին: Քաղաքացիական պատերազմի տարի-
ներին ինտերվենսների հաճանավերը Կոյվիստոն ոգտազոր-
ծում էյին իրրև հենակետ: Կոյվիստոյի շրջանից թշնամա-
կան ռազմանավերը գնդակոծում էյին Կրոնշտադտի առա-
ջավոր ամրությունները: Կոյվիստոն լավ պաշտպանված է
քամուց և փոթորիկներից, իսկ ծովի կողմում գտնվող Սեյա-
կարի ու Լավանսաարի կղզիների շնորհիվ լավ ապահովված
է ծովի կողմից հնարավոր հանկարծակի հարձակումներից:
Վիպուրի նավահանգիստը յերկու նավամատուց ունի՝ հյուս-
սիսային ու հարավային և կարևոր ստրատեգիկ կետ
է: Կոտկա նավահանգիստը անտառանյութի արտահան-
ման կարևորագույն կետ է: Դրան նպաստում է նավահան-
գըստի մոտ գտնվող Կյումմենե գետը, վորը Պեյենյան լայ-
նարձակ լճային օխտեմի համար լաստաղնաց ճանապարհն

է: Նավահանգիստը կազմված է յերեք նավամատուցներից:
Կոտկայի խարսխակայանները կարող են տեղավորել մեծ
թվով ականանավեր ու հաճանավեր: Տուրկուն՝ յերկիր ներ-
մուծվող ապրանքների կարևոր նավահանգիստն է: Այստեղ
բեռնաթափվում է՝ ածուխը, կոքսը, յերկաթահանքը,
հացը:

Ֆինլանդիան առջ յելք չուներ դեպի Մատուցյալ ու-
կիանոսը և ստացավ այդ միայն 1920 թ. ՌեՍՖՇ-ի հետ
կնքած հաշտության պայմանագրով: Այդ պայմանագրով
Ֆինլանդիային միացվեց Պեչենեգա մարզը (Չինորսական
թերակղզի): Չինորսական թերակղզու շրջանումն է՝ չսառ-
չող նավահանգիստ Պետսամոն: Այս նավահանգստի նշանա-
կությունը, վորը յերկրի արդյունարերական ու առևտրա-
կան կենտրոնների հետ յերկաթուղային հաղորդակցություն
չունի, մեծ է: 1939 թ. նախատեսված էր դեպի Պետսամո
նավահանգիստը տանող յերկաթուղային շինարարության
վրա ծախսել ավելի քան 150 միլիոն մարկ:

Լենինը հաճախ ընդդժում էր Ֆինների կուլտուրան ու
դրադիտությունը: Ֆիննական ժողովրդի բարձր կուլտուրա-
յի փայլուն արտահայտությունն է հանդիսանում համաշ-
խարհային դրականության դանձարանի մեծագույն գործը՝
«Կալեվլայն» (Ֆիննական ժողովրդական եպոսը): Իբ
գեղարվեստական ուժով բացառիկ այդ եպիքական յերկը
վոչ միայն սկիզբ դրեց Ֆիննական դրականության, այլ
զգայի չափով նպաստեց Ֆիննական ժողովրդի կուլտուրայի
նկատմամբ հետաքրքրության ուժեղացմանը: «Կալեվլայնի»
ավելի քան 22 հազար տուն վոտանավորները հավաքել է
Ֆիննական պոետ—տորպարի (դյուրացու) դավակ՝ բանա-
ստեղծ Լենրոտը: Շատ տարիների ընթացքում, ճանապար-
հորդելով յերկրի մի շրջանից մյուսը, Լենրոտը բուժ և
դրի յեր առևտմ «Կալեվլայնի» յերդերը: «Կալեվլայնում»
վառ կերպով արտահայտված է Ֆիննական ժողովրդի ձրդ-
տումը դեպի ազատություն, նրա իղձերը, նրա կենցաղը:
«Կալեվլայնում» արտացոլվել է նաև թշվառ, ազատագուրի
ժողովրդի անմխիթար վիճակը: Դա վառ կերպով արտա-
հայտված է հովիվ Կուլլերվոյի պարզ յերգի մեջ:

Կալ է ապրում տիրուհին,
 Յեկում է ցորեն հաց իր համար,
 Համեղ բլիթներ է պատրաստում իր համար,
 Յեկ առատ յուղ է քսում նա նրանց:
 Իսկ հովիվը վերցնում է քարթու հաց,
 Յեկ չոր կեղևն է ծամում նա նրա,
 Վարսակից հացիկ է կրծում նա միշտ,
 Ու կտրատում է նա այդ հացը մղեղոտ՝
 Ծղոսի հաց է ուտում նա:
 Ծամում է հացը՝ սոճու կեղևի,
 Կոճում է նա ջուրը թեղիով,
 Զուր է խմում նա արձատների տակից:

Կամ թե՛

Խեղճութուն է այնտեղ՝ վարի վրա,
 Թշվառություն է ծաղկում դաշտերում.
 Հասունանում է վիշտը ճանապարհների վրա,
 Ու աճում են հոգսերը անտառում:

Ֆինլանդիայում 3 համայնարան կա. 2-ը Հելսինկիումն են, մեկը Տուրկուլում: Հելսինկիի համալսարանը (վորը փոխադրված է Տուրկուլից) գոյություն ունի 1640 թվից: Յերկրում զգալի քանակությամբ դրքեր, թերթեր և ժուռնալներ են հրատարակվում: Նույնիսկ փոքր քաղաքներում կան դրադարաններ, գրավաճառանոցներ, տպարաններ:

Բայց այդ ուսումնական հաստատությունների և կուլտուրական հիմնարկների դռները պինդ փակված են Ֆինլանդական Ժողովրդի համար:

Ֆինլանդական բուրժուազիան ամեն կերպ ճնշել է ժողովրդի ձգտումը դեպի կուլտուրան ու լուսավորությունը:

Ֆիննական օեակցիոներներից մեկը վերջերս հայտարարեց, զոր հողը փորփրելու կամ կով կթելու համար անհրաժեշտություն չկա համալսարանական կրթություն ստանալու: Վերջուներ, սեյմի նախկին նախագահը և ապա լուսավորության մինիստրը, իր գործունեությունն սկսեց այն բանից, զոր հրաման սրձակեց դպրոցներում կրոնական կրթությունն ուժեղացնելու և մարմնական պատիժներ մշտցրնելու մասին: Հայանի օեակցիոներ Սվինխուսթուրը պրեզիդենտի պաշտոնում յեղած ժամանակ հրաժարվեց հաստա-

սել սեյմի վորոշումը դպրոցականներին ճրի դասագրքեր տալու վերաբերյալ, վորը կիրառվում էր մի շարք տարիների ընթացքում: Ժողովրդական լուսավորության վրա ծախսվող գումարները սխտեմատիկորեն կրճատվում էին: Եստ դպրոցներ դատարի էին մնում, ուսուցիչներն աշխատանք չունեին, իսկ բարձրագույն դպրոցներն ամբարտաճներն իրենց գիտությունը գործադրելու ասպարեզ չէին գտնում:

* * *

Պատերազմի ժամանակ Ֆինլանդիան, մեծ լարվածությամբ, հազիվ թե կկարողանա 300-հազարանոց բանակ դուրս բերել: Ֆինլանդիայի կանոնավոր բանակը, ներառյալ ուղային և ծովային նավատորմը, մոտ 30 հազար մարդ է կազմում: Բանակը բաղկացած է յերեք հետևակ դիվիզիաներից, մի հեծյալ բրիգադայից և հատուկ զորամասերից:

Բացի կանոնավոր բանակից, Ֆինլանդիայում կա սագմական կազմակերպություն—չլուցիոր, վորը կազմված է կամավոր սպիտակ-զինարդիականներից: Այդ կազմակերպությունը փաստորեն մի յերկրորդ բանակ է՝ ամելի բազմամարդ և քաղաքականապես ամելի փտասելի: 1927 թ. որենթով չլուցիորը ճանաչված է վորպես յերկրի զինված ուժերի բաղկացուցիչ մասը: Նա միավորում է մոտ 100 հազար մարդ: Գոյություն ունեն նաև կանանց ջոկատներ, այսպես կոչված՝ «Լոտտա-Սվերդ» ջոկատները (մոտ 50 հազար մարդ), վորոնք պատերազմի ժամանակ սագմա-սանիտարական և մատակարարման ծառայություն են կատարում:

Ֆինլանդական բանակը զորաշարքում առաջին դժի մոտ 100 ինքնաթիռներ ուներ (ոեգերվում յեղածների հետ միասին 200 ինքնաթիռներ): Յամաքային զորամասերը գինելու համար կար՝ 1500 գնդացի, 112 թեթև և 50 ծանր հրանոթ: Ֆինլանդիայի ծովային ուժերն են՝ 2 ախային պաշտպանություն զրահանավ, 4 սուզանավ, 4 տորպեդային կատերներ և միքանի պահականավեր:

Ֆինլանդիայում յերկու խոշոր ամրոց կա. Սուամենլիննա (Սվեաբորգ)՝ Հելսինկիի մոտ և Վիպուրի: Բացի դրանից ամբողջություններ կան Կարելյական պարանոցի վրա

և Լադոգա լճում՝ Վալամյան կղզիներէ վրա: Կառուցված են անբողոքներ յերկրի հարավային մասում—Տուրկուլում, Հելսինկիում, Տամպերեյում, Մարիենգամնում:

1938 թ. յերկրի ռադմական բյուլեն կազմում եր 1.049 միլիոն ֆիննական մարկ: 1939 թ. ռադմական ծախսերը դեբազանցեցին 2 միլիարդ մարկից:

ՍՊԻՏԱԿ-ՖԻՆԼԱՆԴԻԱՆ՝ ՀԱԿԱՆՈՐՀՐԴԱՅԻՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆԵՐԻ ԲՈՒՆ

Ձեռք-ձեռքի և ուս-ուսի տված են դնում ԽՍՀՄ-ի Կարմիր Բանակի հերոսական դերերն ու Ֆինլանդիայի ժողովրդական բանակի գորամասերը: Արդեն կազմված և 1-ին ֆիննական կորպուսը, վորը մարտերի ընթացքում կլրացի հեղափոխական բանվոր և դյուղացի կամավորներով:

Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան ժողովրդական կառավարութիւնը պարզորեն տեսնում և այն ուղին, վորով նա տանում և յերկիրը դեպի հաստատուն խաղաղութիւն, դեպի վերածնունդն ու ծաղկումը: Ժողովրդական կառավարութիւնն իր առաջ դրել և հետեյալ խնդիրները,—ստեղծել ժողովրդական բանակի պետական հսկողութիւն սահմանել մասնավոր խոշոր բանկերի ու արդյունաբերական ձեռնարկութիւնների վրա, վերացնել դործազրկութիւնը, աշխատանքային որը կրճատել հասցնելով մինչև 8 ժամի, բանվորների համար ապահովել յերկշաբաթյա արձակուրդը, կոնֆիսկացիայի յենթարկել խոշոր կալվածատեր—հողատերերի հողերը և հանձնել դրանք սակավահող և հողազուրկ դյուղացիներին, դյուղացիներին ազատել հարկերի, ապառքների վճարումներից, ցուց տալով ամեն տեսակի պետական ոգնութիւն՝ սակավազոր դյուղացիական անտեսութիւնները բարելավելու համար, անցկացնել պետական կառուցվածքի, աղմինիստրացիայի ու դատական դործերի դեմոկրատացում, ալիւլացնել պետական սուբսիդիաները կուլտուրական կարիքների ու դպրոցական դործի վերակառուցման համար, ապահովել բանվորների ու շունկորների յերեխաների համար դպրոցներ

հաճախելու հնարավորութիւնը, ամեն կերպ հող տանել՝ ժողովրդական կրթութիւնը, գիտութիւնը, գրականութիւնն ու արվեստը պրոգրեսիվ վոզով դարդացնելու մասին:

Ժողովրդական կառավարութիւնը, վորը հենվում է աշխատավորական ժողովրդական ճակատի վրա, իր գեկլա-բացիլայի մեջ դիմեց Խորհրդային Միութիւնը՝ առաջարկելով կնքել փոխադարձ ոգնութեան պայմանագիր:

1939 թվի դեկտեմբերի 1-ին դիվանագիտական հարաբերութիւններ հաստատվեցին Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան և Խորհրդային Միութեան միջև: Հաջորդ օրը, 1939 թվի դեկտեմբերի 2-ին, ԽՍՀՄ-ի և Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան միջև կնքվեց փոխադարձ ոգնութեան ու բարեկամութեան պայմանագիր: Այդ պատմական փաստաթուղթը հաստատուն բարեկամական հարաբերութիւնների հիմք դրեց համատեղ ուժերով ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ Ֆինլանդիայի անվտանգութեանն ու անձեռնմխելիութեանն ապահովելու համար: Խորհրդային Միութեանն ու Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը պարտավորվեցին ցույց տալ միմյանց ամեն տեսակի ոգնութիւն, այդ թվում նաև ռազմական՝ յեվրոպական վորքէ յերկրի կողմից Ֆինլանդիայի վրա հարձակվելու կամ հարձակման սպառնալիքի դեպքում:

Անգնահատելի յե այդ պայմանագրի նշանակութիւնը, վորպես վկայութիւն Ֆիննական ժողովրդի դարավոր իղձերի իրականացման մասին և կարելական ժողովրդին իրեն արյունակից Ֆիննական ժողովրդի հետ Ֆինլանդական միացյալ ու անկախ պետութեան մեջ վերամիավորելու մասին: Ընդառաջելով Ֆիննական ժողովրդի ազգային իղձերին, ԽՍՀՄ-ն համաձայնեց Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը հանձնել Խորհրդային Կարելիայի այն շրջանները, վորոնցում գերակշռում է կարելական բնակչութիւնը: Խորհրդային Կարելիայի այդ շրջանները հսկայա-

կան տերիտորիա յեն կազմում—70 հազար քառակուսի կիլոմետր:

Ի նշան Ֆինլանդական Դեմոկրատական Կառավարութեան կողմից ԽՍՀՄ-ի հանդէպ ունեցած բարեկամութեանն ու խոր վստահութեան, ընդառաջելով ԽՍՀՄ-ի և հատկապես Լենինգրադ քաղաքի անվտանգութեանն ամրացնելու վերաբերյալ Խորհրդային Միութեան ցանկութիւններին, Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը համաձայնեց սահմանի վորոշ տեղաշարժ կատարել Կարելական պարանոցում՝ Լենինգրադից դեպի հյուսիս ուղղութեամբ, Խորհրդային Միութեանը հանձնելով 3970 քառակուսի կիլոմետր տարածութեամբ տերիտորիա:

Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը, յենելով ԽՍՀՄ-ի և Ֆինլանդիայի անվտանգութեան ամրացնելու փոխադարձ շահերից, համաձայնութիւն հայտնեց Խորհրդային Միութեանը կապալով սուրու Խանկո թերակղզին և նրան հարող մի շարք կղզիներ, այնտեղ ռազմա-ծովային այնպիսի բազա տեղծելու համար, վորով կարելի լինի՝ յենելով Ֆինլանդիայի ու ԽՍՀՄ-ի անվտանգութեանն ապահովելու շահերից՝ ազրեսիայից պաշտպանել Ֆիննական ծոցի մուտքը:

Խանկո թերակղզին գտնվում է Ֆինլանդիայի ծայր հարավում, իր տերիտորիայով մեծ չէ, առաջակարգ ճշանակութիւն ունի Ֆիննական ծոցի մուտքը պաշտպանելու համար: Խանկոն կարևոր ստրատեգիկ նշանակութիւն ունի նաև վորպես չսառչող նավահանդիստ և իբրև հիանալի խարսխակայան:

Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը համաձայնեց Խորհրդային Միութեանը վաճառել Ֆիննական ծոցում գտնվող Սուուրսարի (Գոդլանդ), Սեյսկարի, Լավանսարի, Տյուտերսարի (Փոքր և Մեծ), Կոյվիստո (Բյերկե) կղզիները, ինչպես նաև Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ափին գտնվող Ռիբաչի և Սրեչնի թերակղզիները Ֆինլանդիային, պատկանող մասը:

Սուուրսարին, վոր ամենախոշորն է Ֆիննական ծոցի կղզիներից, ընկած է նրա ամենալայն մասում և գտնվում է Ֆինլանդական նավահանգիստային Կոտկա քաղաքից 40 կի-

լումեար և Եստոնիայի ամերից 50 կիլոմետր հեռավորու-
թյան վրա: Սեյտարի կղզին գտնվում է Կոյվիսաոյից 35
կիլոմետր, Լավանսաարից՝ 50 կիլոմետր հեռավորության
վրա: Տյուսերսաարի կղզին գտնվում է Սուուրսաարի կղզ-
ղուց մոտ 19 կիլոմետր հեռավորության վրա՝ Փինլանդա-
կան Կոսկա քաղաքից դեպի հարավ-արևելք: Կոյվիսաոն՝
Լենինգրադին ամենից ամելի մոտ գտնվող կղզիներից
մեկն է:

Ռիբաչի և Մրեզնի թերակղզիները, վորոնք հիշատակ-
վում են պայմանագրում, միացած են մոտավորապես
4 կիլոմետր լայնությամբ պարանոցով և կազմում են Ռի-
բաչի թերակղզին: Կղզիների ամերին շատ ծոցեր ու խոր-
շեր կան: Թերակղզու մոտով անցնում է Հոլմֆլադերմի տաք
հոսանքը, վորի շնորհիվ այդ տեղում ամբ չի սառչում:
Այդ հոկայական նշանակութուն ունի նավահանգիստային
չինարարության համար:

Սորհրդային Միության և Ֆինլանդական Դեմոկրատա-
կան Հանրապետության միջև կնքված պայմանագիրը ապ-
րանքաշրջանառության մեջ զարգացում է նախատեսում
յերկու յերկրների միջև: Պայմանագրի համաձայն տարեկան
ապրանքաշրջանառությունը զգալիորեն բարձր կլինի 1927
թվի ապրանքաշրջանառությունից, յերբ նա հասնում էր
մաքսիմալ թվի՝ 800 միլիոն Ֆիննական մարկի:

Հաղթանակած սոցիալիզմի յերկիրը դործնականում
ապացուցում է, վոր ինքը փոքր յերկրների ազգային ապա-
գայի, նրանց անվտանգության ու անկախության ամբա-
պնդման, նրանց եկոնոմիկայի ծաղկման ազնիվ բարեկամն
ու սրտավարն է հանդիսանում: Սորհրդային Միությունը
հարևան յերկրներին մոտենում է անկեղծ բարեկամու-
թյամբ, զգայուն կերպով հաշի առնելով նրանց կարիքնե-
րը, չահերն ու ազգային իղձերը: Համաշխարհային պառ-
մությունն այդպիսի ազգային քաղաքականություն դեռ չի
տեսել:

ԽՍՀՄ-ի և Ֆինլանդիայի ժողովրդական կառավարու-
թյան միջև սերտ համագործակցություն հաստատվեց Կար-
մեր Բանակի հենց առաջին քայլերից սկսած, մի բանակ,
վորը փրկում է ստարերկրյա իմպերիալիզմի շղթաները,

վորոնցով կաշկանդված էին Ֆինլանդիայի աշխատավորնե-
րը: Ամենուրեք, վորտեղ հասնում են Կարմիր Բանակի-
ազատարար-բանակի հերոսական զորամասերը, բնակչու-
թյունը դիմավորում է նրանց հոկայական խանդավառու-
թյամբ ու ջերմ սիրով:

Տերիտի քաղաքի ազատ քաղաքացիները ժողովում՝
բանվորների, դուղացիների ու ինտելիկենցիայի ներկայա-
ցուցիչները ջերմորեն վողջունում էին Ֆինլանդական Դե-
մոկրատական Հանրապետության ժողովրդական կառավա-
րությանը, վորի գլուխ է անցել անսասն մարտիկ ու
Փիննական ժողովրդի հավատարիմ գավակ Ոստո Կուուրի-
ները:

«Մենք ջերմորեն վողջունում ենք և հավանություն ենք
տալիս ժողովրդական Կառավարության առաջին քայլե-
րին,—ասվում է այն բանաձևում, վորն ընդունված է
Տերիտիի համաքաղաքային ժողովում,—վորոնք ուղղված
են մեր յերկիրն անկախ ու յերջանիկ դարձնելուն: Կայան-
ղեր—Տանները կառավարությունը վաճառում էր և վաճա-
ռում է Ֆինլանդիայի աշխատավորների կենսական չահերը,
նա հակառակ ժողովրդի կամքի՝ իր տերերը—ստարերկրյա
իմպերիալիստների թեկադրանքով, Ֆինլանդիան սլացղարմ
էր դարձրել Սորհրդային Միության վրա հարձակվելու հա-
մար, նա անմիտ և հանցավոր սլատերազմ սարքեց մեր մեծ
բարեկամի՝ խորհրդային ժողովրդի դեմ: Մենք հաստա
գիտեցինք ու հավատում էինք, վոր հզոր խորհրդային ժո-
ղովուրդը ցանկանում է բոլոր ժողովուրդների հետ ապրել
խաղաղության ու բարեկամության մեջ և վոր միժիայն նրա
սղնությամբ մեր ժողովուրդը կարող է ստեղծել իր համար
հանդիստ ու յերջանիկ կյանք»:

«Մենք հաստատ համոզված ենք,—ասվում է Ռայվոլա
գյուղի դյուղացիների բանաձևում,—վոր այն կառավարու-
թյունը, վորն ստեղծված է ժողովրդի կամքով, կապահովի
մեր ազատությունն ու յերջանկությունը և մեր հայրենիքը
կապտի կապիտալիստական հախչատակիչներից ու սպիտակ-
գվարդիականների կամայականություններից: Մենք հավաս-
տիացնում ենք մեր ժողովրդական Կառավարությանը, վոր
ինչպես մի մարդ՝ Ֆինլանդիայի ժողովրդական բանակի հետ

միասին, զենքը ձեռքներին, չխնայելով մեր ուժերը, իսկ յեթե հարկավոր լինի, նաև մեր կյանքը, կ'ընկնեք պատերազմի պրոպոզիտորներին՝ կայանդերներին, տաններներին, ուղևորներին բռնապետության դեմ, մինչև սպիտակ-գլխարդիականներին լիակատար ջախջախումը, Ֆինլանդական & ընչ-ված ժողովրդի լիակատար ազատության համար»:

Ֆինլանդական ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական շրջադարձն աշխույժ արձագանգ դտավ ամբողջ աշխարհում: Պրոգրեսիվ մարդկությունը վողջունում է ու հավանություն է տալիս խորհրդային քաղաքականությանը, վորը պաշտպանում է վորք ժողովուրդների ազատությունն ու անկախությունը:

Անգլիական պաշտամենտի դեպուտատ, լեյբորիստական կուսակցության հայտնի գործիչ Ստաֆֆորդ Կրիպպը վերջերս հայտարարեց. «Ռուսաստանի վարմունքը միանգամայն տրամաբանական է ու հասկանալի: Նրա քաղաքականության մեջ գլխավորը միշտ յեղել է Սորհրդային Միության ամբողջականությունը պաշտպանելու բացարձակ անհրաժեշտությունը, այն միակ յերկրի, վորտեղ գործնականում իրականացված է բանվոր դասակարգի բանվորական իշխանությունը: Յես համոզվեցի, վոր ամբողջ աշխարհի բանվորների համար հզոր Ռուսաստանի դոյությունն ամենաառաջնակարգ նշանակություն ունի» (ժուռնալ «Տրիբյուն»):

Պրոֆմիտությունների շեֆֆիլդյան խորհրդի նախագահ (Անգլիա) Չարլզ Դարվելը գրում է. «Ֆինլանդական դժբախտ ժողովուրդն ոգտագործվում էր իրրև կույր գործիք իր՝ միջոցների մեջ խտրություն չընող կառավարության կողմից: Այդ կառավարությունը թույլ էր տալիս ոգտագործելու իրեն՝ ուրիշ, ավելի խոշոր այն պետություններին, վորոնք վարում էին հակախորհրդային ինտրիզներ: Յեթե այդ ինտրիզները չլինեյին և ամբողջ հարցի լուծումը հանձնվեր Ֆինլանդական ժողովրդին, ապա տարածաշուկությունները կարող էյին լուծվել բարեկամաբար՝ շատ շարաթներ առաջ»:

Լոնդոնում, մի մեծ ժողովում, բանաձև ընդունվեց, վորն ամբողջովին հավանություն էր տալիս Սորհրդային

Միության գործողություններին և վողջունում էր Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետության ժողովրդական կառավարությանը: Բիրկենհեդ քաղաքի (Չեչիրի կամսություն) ժողովում ընդունված բանաձևում հավանություն է տրվում Կարմիր Բանակի գործողություններին, վորն սղնում է Ֆինլանդական ժողովրդին նրա ազատագրական պայքարում:

Ամերիկական «Դեյլի Ուորկեր» թերթը գրում է, թե՛ բոլոր խաղաղասեր մարդիկ ջերմորեն վողջունում են Ֆինլանդիայի ժողովրդական կառավարության կազմումը: «Դեյլի Ուորկեր» թերթը հրապարակում է՝ ԱՄՆ-ում հրատարակվող Ֆիննական «Յտեենպայն» թերթի խմբագրի հայտարարությունը, վորը Նյու-Յորքում ապրող Ֆիննական բանվորների անունից վողջունում է Ֆինլանդիայի ժողովրդական կառավարությանն ու նրա գլուխ կանգնած Կուուսինենին:

Բերգեն քաղաքի (Նորվեգիա) բանվորների ժողովը Ֆինլանդիայի ժողովրդական կառավարությանը դիմեց վողջույնի հետևյալ խոսքերով.

«Բերգեն քաղաքի բանվորները, հավաքվելով 1939 թ. դեկտեմբերի 3-ին, իրենց վողջույնն են հղում Ֆինլանդիայի Դեմոկրատական կառավարությանը՝ ի նշան համերաշխության: Մենք խնդրում ենք կառավարությանը, Ֆինլանդիայի բանվոր դասակարգին ու ժողովրդին հաղորդել մեր յեղբայրական ցանկությունները, վոր նրանք ժողովրդին թըլնամի մաններհայտական դիկտատուրայի դեմ շուտափույթ հաղթանակ տանեն»:

«Ֆիննական ռեակցիոներները, — հայտարարում էր անգլիական հայտնի ժուռնալիստ Պալմ Դատտը, — միշտ մատնակցել են հակախորհրդային պլաններին ու դավադրություններին, պատերազմի պրոպոզիցիա կազմակերպելու նպատակով: ԽՍՀՄ-ի դեմ Յեվրոպայի հյուսիսում պատերազմի պրոպոզիցիա սարքելու փորձը Չեմբերլենի ու Դալլոյեյի պատերազմական ծրագրերով նախատեսված հետագա քայլն է ու պատերազմը ծավալելու և դա հակախորհրդային պատերազմի վերածելու նրանց քաղաքականու-

Քյան հիմնական մասն է: Այդ դասակարգային մի պրոբլեմ է: Ֆինլանդիայի սեակցիոն կառավարիչներն իրենց իշխանութիւնը կարողացան պահպանել միայն ոտարերկրյա հրամանների ու ոտարերկրյա ֆինլանդների հիման վրա»:

Անդլիական «Իեյլի Մեյլ» թերթը հրատարակեց Քեր-նարդ Շոույի հետևյալ հայտարարութիւնը.

«Ֆինլանդիային մոլորութեան մեջ գցեց նրա բթամիտ կառավարութիւնը: Ռուսաստանի առաջարկութիւնը՝ տե-րիտորիաների փոխանակման մասին՝ Ֆինլանդիան պետք է ընդունէր: Նա պետք է բավարանաչափ խելոք հարեան լի-ներ: Նա, ամենայն հավանականութեամբ, չէր հրաժարվի խորհրդային առաջարկութիւնից, յեթե գործելու լիներ ինքնուրույն կերպով կամ թե՛ յեղնելով իր սեփական շահե-րից: Վաչ մի տերութիւն չի կարող հանդուրժել մի սահ-ման, վարտելից կարելի չէ զնդակոծել մի այնպիսի քաղաք, ինչպիսին է Լենինգրադը: Սոանձնապես, յեթե այդ տերու-թիւնը դիտե, վոր սահմանի այն կողմում գտնվող պետու-թիւնը, վորքան ել նա փոքր և թույլ լինի, սպառնում է իր անվտանգութեանը՝ բթամիտ կառավարութեան պատճառով, վորք գործում է՝ յեղնելով ուրիշ, ավելի ուժեղ պետու-թիւնների շահերից: Ֆինլանդիան ակնհեռորեն յենթա-դրում է, վոր ԱՄՆ-ը ուզում է իրեն, այլապես նա ԽՍՀՄ-ի նկատմամբ իրեն այդպես չէր պահի: Խոսքը վերաբերում է Ռուսաստանի կողմից իր անվտանգութիւնը պաշտպանե-լու ձգտումին և այդ պատճառով Ֆինլանդիայի կողմից չա-փազանց անմիտ բան կլիներ՝ տերիտորիաների փոխանակ-ման վերաբերյալ Ռուսաստանի առաջարկութիւններին չհա-մաձայնվելը»:

Գրողներսով մարդկութիւնը, ԽՍՀՄ-ի ժողովուրդներն ու ֆիննական ժողովուրդը չեն կասկածում, վոր անպար-տելի հերոսական Կարմիր Բանակն ու հզոր Ռյազմ-Մովա-յին Նախատորմը, Ֆինլանդիայի ժողովրդական բանակի հետ միասին, կկատարեն իրենց ազատագրական խնդիրը սպիտակ-ֆիննական ուղղամտութիւնի դեմ մղած կռիւմ:

Խորհրդային մեծ Միութեան ժողովուրդները հսկայա-կան վստահութեամբ վողջունում են Խորհրդային կառավա-րութեան խաղաղ քաղաքականութիւնը, վորն ուղղված է

ԽՍՀՄ-ի սահմանների անվտանգութեան ապահովմանը: Նրանք ցնծութեամբ դիմավորեցին ֆինլանդական ժողովրդ-դին ճնշման սարսափներից, իրավադրկութիւնից ու աղքա-տութեանից ազատագրելու այդ վաղուց սպասվող օրվանը:

«Մեր կառավարութեան ու հարազատ ընկեր Ստալինի իմաստութեան և հեռատեսութեան շնորհով, —ասում էր Կույրիչևյան դադլյահաշինական գործարանի 50-ամյա զարպետ ընկ. Մոխովը, —այժմ պատերազմի վտանգավոր ոլջախը հաջողութեամբ լիկվիդացիայի յե յենթարկվում»:

Ինչո՞ւ համար Ֆինլանդիայի աշխատավոր ժողովուրդը դո՛հ է Կարմիր Բանակից: Նրա համար, վոր այդ բանակը վոչ թե դիշատիչ պատերազմ է մղում, այլ ազատագրական պատերազմ»:

Լենինի քաղաքի Կիրովյան գործարանի կուլեկտիվը բազմահազարանոց միտինգում միահամուռ հայտարարեց.

«183 միլիոն խորհրդային ժողովրդի կամքով մեր վա-ռապանձ Կարմիր Բանակը կործանում է բերում պատերազ-մի դրդիչներին՝ ֆիննական ժողովրդի կեղեքիչներին, ազա-տութիւնն ու յերջանկութիւնն և բերում Ֆինլանդիայի տանջված ժողովրդին»:

Լենինգրադի ղինյորական ոկրուդի ընկե՛ր մարտիկներ, հրամանատարնե՛ր ու քաղաշխատողնե՛ր. Կարմրադրոչ Բալ-թիկյան Նախատորմի ընկե՛ր ծովագնացներ, յերկաթե հո-սանքով ջնջեցեք թշնամուն, նրան հեռու քշեցեք Լենինի քաղաքից — Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափո-խութեան օրրանից: Անողոք կերպով ջախջախեցե՛ք կայան-դերնեքին ու տաններնեքին, ողնեցե՛ք ֆինլանդական բաւն-վորներին ու գյուղացիներին ընդմիշտ ազատվելու անպո-ֆրանսական իմպերիալիզմի այդ հաճոյակատարներից»:

Կարելիայի՝ Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապե-տութեանը համաձայնող շրջաններում բազմամարդ միախնդնե-րում աշխատավորները ջերմորեն վողջունում են Խորհրդա-յին կառավարութեան սրտմական վորոշումը՝ ֆիննական ժողովրդի դարավոր իղձերի իրականացման մասին:

Մեծ վողևորութեամբ անցավ կարելական Սվյատոսոփերո գյուղում կայացած ժողովը: Ժողովականներն իրենց բանա-ձևում հայտարարում եյին.

«Քոստն տարի կարելական ժողովուրդն ապրեց Խորհրդային մեծ Միութեան ժողովուրդների յերջանիկ ու հարուստ ընտանիքում, մինչդեռ Ֆիննական ժողովուրդը հեծում է շահագործողների ճնշման տակ: Այժմ արևը փայլեց նաև Ֆինլանդիայի վրա: Իրականացան Ֆինլանդական ժողովուրդի՝ իր հարազատ յեղբոր, կարելական ժողովուրդի հետ վերամիանալու դարավոր խղճերը: Սրանից հետո կարելական ու Ֆինլանդական ժողովուրդները կսկսեն ապրել միասնական ընտանիքում, կսկսեն կյանքը միասին կառուցել:

Կեցցե՛ք Ֆինլանդիայի ժողովրդական կառավարութեանը՝ Ֆինլանդական ժողովուրդի հավատարիմ զավակ Ռոտո Կուուսինենի ղեկավարութեամբ:

Կեցցե՛ք Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը:

Կեցցե՛ք ԽՍՀՄ-ն, փոքր ժողովուրդների հավատարիմ պաշտպանը:

Կեցցե՛ք ամբողջ աշխարհի աշխատավորներին բարեկամն ու ուսուցիչը—մեծ Մոսկվան:

Մոտ է այն ժամը, յերբ ժողովրդական բանակի Ֆիննական առաջին կորպուսը Հելսինկի կրեբի Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան դրոշը և կկանգնեցնի այն պրեզիդենտական պալատի աշտարակին՝ ի ուբախութեան աշխատավորների և ի սարսափ ժողովուրդի թշնամիների:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՎԼԱՐԱՑԻԱՆ

(Բաձված է ռադիոյով: Թարգմանութուն ֆիններենից)

Ժողովուրդի կամքով, վորը վրդովված է կայանդեր—Երկկո—Տանների անարդ կառավարութեան վոճրադործ քաղաքականութեանից, այսօր Սրենկյան Ֆինլանդիայում կազմված է մեր յերկրի նոր կառավարութեանը, ժամանակավոր ժողովրդական կառավարություն, վորը սրանով ամբողջ Ֆինլանդական ժողովուրդին վճուական պայքարի յե կոչում դահիճների ու պատերազմի պրովոկատորների բռնապետութեանը տատալելու համար:

Ռեակցիոն, ընդաքաղց պլուտոկրատիան, վորը 1918 թվին ոտարեկրյա իմպերիալիստների զորքերի ոգնութեամբ արյան ծովի մեջ խեղդեց Ֆինլանդական աշխատավոր ժողովուրդի դեմոկրատական ազատութեանը, մեր հայրենիքն աշխատավորների համար սպիտակ-գվարդիական դժոխք էր դարձրել: Վաճառելով յերկրի անկախութեան շահերը, Ֆինլանդիայի պլուտոկրատական պարազուլները, Ֆինլանդական ու խորհրդային ժողովուրդների ամեն տեսակի իմպերիալիստական թշնամիների հետ միասին, անընդհատ հակախորհրդային ոտորմական պրովոկացիաների պրաններ էյին խզողում և, վերջապես, մեր յերկրը զցցելին պատերազմի հնոցի մեջ՝ սոցիալիստական Խորհրդային Միութեան՝ Ֆինլանդական ժողովուրդի մեծ բարեկամի դեմ:

Այս կրիտիկական իրադրութեան մեջ Ֆինլանդական աշխատավոր ժողովուրդի լայն մասսաները, վորոնք միշտ ցանկացել են և ցանկանում են խողաղութեան մեջ ապրել Խորհուրդների Յերկրի ժողովուրդների հետ, իրենց տարրական իրավունքն ու իրենց սրբազան պարտականութեանն են

համարում հայրենիքի բախար վերցնել իրենց հուսալի մեռ-
քերի մեջ: Յերկրի զանազան մասերում ժողովուրդն արդեն
ապրտամբել է և հոչակել է դեմոկրատական հանրապետու-
թյան ստեղծումը: Ֆինլանդական բանակի զինվորների մի
մասն արդեն անցել է ժողովրդի կողմից պաշտպանվող
նոր կառավարութայան կողմը:

Սորհրդային Միությունը, վորը յերբեք չի սպառնացել
ու չի անհանգստացրել Ֆինլանդիային, վորը միշտ հարգել
է նրա անկախությունը և յերկու տասնյակ տարիների ըն-
թացքում հանդուրժել է սպիտակ-Ֆինլանդիայի ավանտյու-
րխտական պայքարչությունների սարքած պրովոկացիաները,
այժմ կանգնել է՝ Կարմիր Բանակի ուժերով, իր անվտան-
գության հանդեպ յեղած այդ սպառնալիքներին վերջ դնե-
լու անհրաժեշտության առաջ: Այդ նպատակը լիովին հա-
մապատասխանում է նաև մեր ժողովրդի կենսական շահե-
քին: Ուստի, Ֆինլանդիայի ժողովրդական մասսաները՝
Քաղարի, անպարտելի Կարմիր Բանակին դիմավորում են
հսկայական խանդավառությամբ, գիտենալով, վոր նա
Ֆինլանդիա յե դալիս վոչ թե վորպես նվաճող, այլ իբրև
մեր ժողովրդի բարեկամն ու ազատարարը:

Ֆինլանդիայի ժողովրդական կառավարությունը, խո-
րապես համոզված լինելով, վոր Սորհրդային Միությունը
չունի մեր յերկրի անկախության դեմ ուղղված վորևե
նպատակ, լիովին հավանություն է տալիս և պաշտպանում
է Կարմիր Բանակի զործողությունները Ֆինլանդիայի տե-
րիտորիայում: Նա այդ բանը դիտում է իբրև անդնահատելի
սղծություն Ֆինլանդիայի ժողովրդին Սորհրդային Միու-
թյան կողմից՝ համատեղ ջանքերով հնարավորին չափ շու-
տափույթ կերպով լիկվիդացիայի յենթարկելու համար
պատերազմի այն ամենավտանգավոր ոճխար, վորն ստեղծել
էր Ֆինլանդիայում պատերազմի պրովոկատորների վոճրա-
դործ կառավարությունը:

Այդ խնդիրն ամենաարագ կերպով կատարելու համար
Ֆինլանդիայի ժողովրդական կառավարությունը հրավի-
րում է ԽՍՀՄ-ի կառավարութայանը Ֆինլանդական Դեմո-
կրատական Հանրապետութայանը ցույց տալու անհրաժեշտ
ամեն աջակցություն՝ Կարմիր Բանակի ուժերով:

ԽՍՀՄ-ի հերոսական Կարմիր Բանակի հետ մեռ-քեր
սոված համատեղ պայքարին մասնակցելու համար Ֆինլան-
դիայի ժողովրդական կառավարությունն արդեն կազմեց է
առաջին ֆիննական կորպուսը, վորն առաջնիկա մարտերի
ընթացքում կհամարվի կամավորներով՝ հեղափոխական
բանվորներից ու գյուղացիներից, և պետք է դառնա Ֆին-
լանդիայի ապագա ժողովրդական Բանակի ամուր կորիզը:
Սուղին ֆիննական կորպուսին պատիվ է վիճակված մայ-
րաքաղաք բերելու Ֆինլանդական Դեմոկրատական Հանրա-
պետութայան դրոշը և այն ամբացնելու պրեզիդենտական
պալատի կտրին, ի ուրախություն աշխատավորների և
ի սարտաի ժողովրդի թշնամիների:

Մեր պետությունը պետք է լինի դեմոկրատական հան-
րապետություն, վորը կսպասարկի ժողովրդի շահերին, —
ի տարբերություն Կայանդեր—Երկկոյի պլուսկրատական
հանրապետությունից, վորն սղասարկում էր կապիտալիստ-
ների ու կալվածատերերի շահերին: Բայց մեր պետությու-
նը, այնուամենայնիվ, խորհրդային տիպի պետություն չէ,
վորովհետև խորհրդային կարգերը չեն կարող հաստատվել
մենմիայն կառավարութայան ուժերով՝ առանց ամբողջ ժո-
ղովրդի ու մասնավորապես գյուղացիութայան համաձայնու-
թյան:

Դրան համապատասխան մեր կառավարությունը հան-
դիսանում է Ֆինլանդիայի Դեմոկրատական Հանրապետու-
թյան ժողովրդական կառավարություն: Նա կհենվի լայն
աշխատավորական ժողովրդական մակատի վրա: Իր ներգա
կազմով Ֆինլանդիայի ժողովրդական կառավարությունն
իրեն համարում է ժամանակավոր կառավարություն: Յերկ-
րի մայրաքաղաքը՝ Հելսինկի ժամանելուն պես նրա կազմը
կվերակառուցվի և կընդարձակվի՝ աշխատավորական ժողո-
վրդական ճակատին մասնակցող տարբեր կուսակցու-
թյունների ու խմբերի ներկայացուցիչներով: Ժողովրդական
կառավարութայան վերջնական կազմը, նրա լիազորություն-
ներն ու զործողությունները յենթակա յեն Սեյմի սանկցիա-
յին, վորը կընտրվի ընդհանուր, հավասար և ուղղակի ընտ-
րական իրավունքի հիման վրա, զաղտնի քվեարկությամբ:

Ֆինլանդիայի ժողովրդական կառավարությունն իր

առաջնակարգ խնդիրն և համարում Ֆինլանդական սպիտակ-
գլխադեղիններին կառավարութեան տապալումը, նրա գին-
ված սեփերի ջախջախումը, հաշտութիւնն օ կնքելը և Ֆին-
լանդիայի անկախութիւնն ու անվտանգութիւնն ապահո-
վելը՝ Խորհրդային Միութեան հետ ամուր քարեկամական
հարաբերութիւններ հաստատելու միջոցով:

Ֆինլանդիայի Ժողովրդական Կառավարութեանը դի-
մում է ԽՍՀՄ-ի կառավարութեանը՝ առաջարկելով փոխա-
դարձ ոգնութեան պակտ կնքել Ֆինլանդիայի ու հորինդա-
յին Միութեան միջև և բավարարել Ֆիննական ժողովրդի
գարաւոր ազգային հույսը՝ կարելիս ժողովուրդը նրա
հետ միասնական ու անկախ փինլանդական պետութեան մեջ
վերամիավորելու վերաբերյալ: Ֆինլանդիայի Ժողովրդա-
կան կառավարութեանը բոլոր հիմքերն ունի հուսալու, վոր
Խորհրդային Միութեան հետ բարեկամական հարաբերու-
թիւններ հաստատելու իր բունած հաստատուն կուրսը հնա-
բաւորութիւն կտա ԽՍՀՄ-ի կառավարութեանը բավարա-
րելու այդ առաջարկը:

Ժողովրդական Կառավարութեանը ցանկանում է բա-
րեկամական հարաբերութիւններ պահպանել նաև մյուս բո-
լոր պետութիւնների հետ: Նա ճանաչում է Ֆինլանդիայի
անտեսական ու Ֆիննասական պարտավորութիւնները մյուս
պետութիւնների հանդէպ, վորքանով այդ պարտավորու-
թիւնները չեն հակասի Ֆինլանդիայի սուվերենիտետին և
վորքանով այդ պետութիւններից վորևէ մեկը թշնամական
քայլեր չի ձեռնարկի Ֆինլանդական Դեմոկրատական Հան-
րապետութեան ու նրա Ժողովրդական Կառավարութեան
դեմ:

Իր ներքին քաղաքականութեան մեջ Ժողովրդական Կա-
ռավարութիւնն իր առջև դնում է հետևյալ խնդիրները.

- 1) Ֆինլանդիայի Ժողովրդական Բանակի ստեղծումը.
- 2) մասնավոր խոշոր բանիւրի ու արդյունաբերական
խոշոր ձեռնարկութիւնների վրա պետական վերահսկողու-
թեան սահմանումը և միջակ ու մանր ձեռնարկութիւննե-
րին աջակցութիւն ցույց տալու ձեռնարկումները.
- 3) դործարկութիւնն ամբողջովին վերացնելու միջո-
ցառումների կիրառումը.

4) աշխատանքային որով կրճատումը մինչև 8 ժամի,
ամառային յերկշաբաթյա արձակուրդի ապահովումը բան-
վորների համար և բնակարանային վարձի իջեցումը բան-
վորների ու ծառայողների համար.

5) խոշոր կալվածատեր-հողատերերի հողերի կոնֆիս-
կացիան, ձեռք չտալով գյուղացիների հողին ու գույքին,
և կոնֆիսկացիայի յենթարկված հողերի հանձնումը հո-
ղագուրի ու սակավահող գյուղացիներին.

6) գյուղացիներին հարկերի ապառքների վճարումից
ազատելը.

7) պետական ամեն տեսակի ոգնութիւնը սակավագոր
գյուղացիների անտեսութիւնը բարձրացնելու համար,
առաջին հերթին նրանց լրացուցիչ հողեր, արոտատեղեր,
խիկ ըստ հնարավորութեան՝ տնային կարիքների համար
նաև անտատ հատկացնելու միջոցով—խոշոր կալվածատերե-
րից բռնագրաված հողերի հաշիւն.

8) պետական կառուցվածքի, ազմինխտրացիայի ու
դատական գործի ղեմնկրատացումը.

9) կուլտուրական կարիքներին համար պետական սուբ-
սիդիաների ավելացումը և դպրոցական գործի վերակազ-
մումը. բանվորների ու այլ չքավորների յերեխաներին հա-
մար դպրոց հաճախելու հնարավորութեան ապահովումը,
ինչպես նաև Ժողովրդական կրթութիւնը, գիտութիւնը,
գրականութիւնն ու արվեստը պրոպերսիւլ վորով զարգաց-
նելու մասին ամեն կերպ հոգ տանելը:

Ժողովրդի համար ատելի՝ Կայանդեր—Երկկրցի պլուտո-
կրատական կառավարութիւնը, վորն ամեն բան անում էր
մեր հայրենիքը կործանելու համար, կորցնելով ամեն տե-
սակի աջակցութիւն Ժողովրդի կողմից, պարզվում է, վոր
հրաժարական է տվել: Այդ ատելի կառավարութիւնը փո-
խարինված է Տանների կառավարութեամբ: Բայց Տանները
մեր Ժողովրդի նույնպիսի մի թշնամի յե, ինչպես և Կայան-
դերը: Տանների կառավարութիւնը մազաչափ անգամ ավելի
յով չե, յեթե վոր ավելի վատ՝ Կայանդերի կառավարու-
թիւնից: Նա նույնպես ատելի յե մեր Ժողովրդի համար,
ինչպես և Կայանդերի կառավարութիւնը:

Ֆինլանդիայից հեռու՝ բշենի այդ դահիճներին: Տապա-
լե՛նի կառավարական ամբողջ սնանկացած շայկան:

Վոտքի՛ յեւ, Ֆինլանդիայի բազմաչարքար աշխատ-
վոր ժողովուրդ: Համարձակ պայքարի՛ գնա քեզ ճնշողների
ու քո դահիճներին բռնապետութեան դեմ:

Վոտքի յեւ՛ք, բոլոր քաղաքացիներ՛ը, ում համար թանկ
է հայրենիքի ասպզան:

Թոթափե՛նք ժողովրդի ուսերից սև սեակցիայի վո՛ւ-
մակը:

Մաքրե՛նք ուղին ժողովրդական բարեկեցութեան ու
կուլտուրայի համար, մեր ժողովրդի դարավոր ազգային
խղճերի իրականացման համար:

Թող հաղթի Ֆինլանդիայի բանվորների, գյուղացիների
և աշխատավոր ինտելիգենցիայի հարազատ գործը:

Ազատ ու անկախ Ֆինլանդական Դեմոկրատական Հան-
րապետութեան դրոշի տակ առա՛ջ դեպի հաղթանակներ:

Ֆինլանդական ժողովրդական կառավարութեան նախագահ և
արտաքին գործերի մինիստր՝ Ոստո կառուսինեն
Ժողովրդական կառավարութեան նախագահի տեղակալ և
Ֆիննաների մինիստր՝ Մաուրի Ռոզենբերգ
Պաշտպանութեան մինիստր՝ Ա. Բուլ Անտոլիա
Ներքին գործերի մինիստր՝ Տուուրե Լեյսեն
Հողագործութեան մինիստր՝ Արմա Եյկիյա
Կուլտուրութեան մինիստր՝ Ինկերի Լեյտինեն
Կարելիայի գործերի մինիստր՝ Պաավո Պրոկկոնեն

Տեղիկի քաղաքում

1 դեկտեմբերի 1939 թ.:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ
ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Մույն թվի դեկտեմբերի 1-ին Ֆինլանդիայի ժողովրդ-
ական կառավարութեան նախագահ և արտաքին գործերի
մինիստր պ. Կուուսինենը դիմեց ԽՍՀՄ Գերագույն Խոր-
հրդի նախագահութեանը՝ Ֆինլանդիայի ժողովրդական
կառավարութուն կազմվելու մասին պաշտոնական հայտա-

բարութեամբ և առջարկեց դիվանագիտական հարաբերու-
թյուններ հաստատել Ֆինլանդական Դեմոկրատական Հան-
րապետութեան ու Խորհրդային Միութեան միջև:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահութեանը վորո-
շեց ճանաչել Ֆինլանդիայի ժողովրդական կառավարու-
թյունը և դիվանագիտական հարաբերություններ հաստա-
տել ԽՍՀ Միութեան ու Ֆինլանդական Դեմոկրատական
Հանրապետութեան միջև: (ՏՍՄՄ)

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ
ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկտեմբերի 2-ին Մոսկվայում Արտգործժողովում ընկ.
Վ. Մ. Մոլոտովի և Ֆինլանդիայի ժողովրդական կառա-
վարութեան նախագահ ու Արտաքին գործերի մինիստր պ.
Ո. Վ. Կուուսինենի միջև բանակցություններ տեղի ունեցան
Խորհրդային Միութեան և Ֆինլանդական Դեմոկրատական
Հանրապետութեան միջև փոխադարձ ոգնութեան ու բարե-
կամութեան պայմանագրեր կնքելու հարցի վերաբերյալ:
Բանակցություններին մասնակցում էին ընկ. ընկ. Սաա-
լինը, Վորոշիլովը, Ժղանովը:

Բանակցություններն ավարտվեցին ԽՍՀՄ-ի և Ֆինլան-
դական Դեմոկրատական Հանրապետութեան միջև փոխա-
դարձ ոգնութեան ու բարեկամութեան պայմանագրի ստո-
բադրումով: Պայմանագրի տեքստը բերվում է ստորև:

ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ
ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահութեանը՝ մեկ
կողմից, և

Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան կա-
ռավարութեանը՝ մյուս կողմից,

համոզված լինելով, վոր այժմ, յերբ Ֆինլանդական

ժողովրդի հերոսական պայքարով և ԽՍՀՄ Կարմիր Բանակի ջանքերով լիկվիդացիայի յե յենթարկվում պատերազմի ամենալուսանդամի որ ոջախը, վոր ստեղծել եր Խորհրդային Միութեան սահմանների մոտ Ֆինլանդիայի նախկին պլուտոնիկրատական իշխանութունը՝ ի հաճույս իմպերիալիստական տերութեաների, և Ֆինլանդական ժողովուրդը կազմել է իր Դեմոկրատական Հանրապետութեանը, վորն ամբողջապես հենում է ժողովրդի աջակցութեան վրա, — հասել է ժամանակը բարեկամական հաստատուն հարաբերութեաներ հաստատելու մեր յերկրների միջև և համատեղ ջանքերով ապահովելու մեր պետութեաների անվտանգութեանն ու անձեռնմխելիութեանը:

Ընդունելով, վոր հասել է ժամանակն իրականացնելու Ֆիննական ժողովրդի դարաւոր իղձերը՝ կարելական ժողովուրդն իրեն ազգակից Ֆիննական ժողովրդի հետ միասնական Ֆինլանդական պետութեան մեջ վերամիացնելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով սահմանային հարցերի բարեկամատ ու յերկու կողմերի ել շահերին համապատասխան կարգավորումը, և հատկապես Լենինգրադի և Ֆինլանդիայի հարաւային ափերի անվտանգութեան ապահովումը:

Նպատակ ունենալով ամբարտնջել 1920 թվի հոկտեմբերի 23-ի հաշտութեան պայմանագրի վրդին ու հիմնական դրույթները, պայմանագիր, վորը հիմնված է մյուս կողմի պետական անկախութեանը փոխադարձաբար ճանաչելու և նրա ներքին դործերին չմիջամտելու վրա,

անհրաժեշտ դասն միմյանց հետ կնքել փոխադարձ ոգտութեան ու բարեկամութեան ներքոհիշյալ պայմանագիրը Խորհրդային Միութեան ու Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան միջև և այդ նպատակով իրենց լիազորներ նշանակեցին:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահութեանը՝

ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսար վ. Մ. Մոլոտովին:

Ֆինլանդիայի ժողովրդական Կառավարութեանը՝

Ֆինլանդիայի ժողովրդական Կառավարութեան Նախագահ և Արտաքին Գործերի Մինիստր Ո. Վ. Կուուսինենին, այդ լիազորները, փոխադարձաբար ներկայացնելով իրենց լիազորութեանները, վորոնք պարզվեց վոր կազմված են հարկ յեղած ձևով և պատշաճ կարգով, համաձայնվեցին ներքոհիշյալում:

ՀՈՒՎԱԾ I

Ի նշան Խորհրդային Միութեան կողմից Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան նկատմամբ բարեկամութեանն ու խորը վստահութեան, ընդառաջ գնալով Ֆիննական ժողովրդի ազգային իղձերին՝ կարելական ժողովուրդը Ֆիննական ժողովրդի հետ միասնական ու անկախ Ֆինլանդական պետութեան մեջ վերամիավորելու վերաբերմամբ, Խորհրդային Միութեանը համաձայնութեանն է հայտնում Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը հանձնել Խորհրդային Կարելիայի այն շրջանները, վորտեղ գերակշռում է կարելական բնակչութեանը — ընդամենը 70 հազար քառակուսի կիլոմետրի չափով, այդ տեղիտորիան մտցնելով Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան պետական տերիտորիայի կազմի մեջ և ԽՍՀՄ-ի ու Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան միջև սահման հաստատելով հարակից քարտեզի համաձայն:

Ի նշան ԽՍՀՄ-ի նկատմամբ Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեան բարեկամութեանն ու խորը վստահութեան, ընդառաջ գնալով Խորհրդային Միութեան ցանկութեաններին՝ ԽՍՀՄ-ի և հատկապես Լենինգրադ քաղաքի անվտանգութեանն ամբարտնջելու / մասին, Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետութեանը համաձայնութեանն է հայտնում վորոշ չափով տեղաշարժելու սահմանը Կարելիական պարանոցում՝ Լենինգրադից հյուսիսային ուղղութեամբ, Խորհրդային Միութեանը հանձնելով 3970 քառակուսի կիլոմետր տերիտորիա, ըստ-վորում ԽՍՀՄ-ն իրեն պարտաւոր է համարում հատուցելու Ֆինլանդիային Կարե-

լական պարանոցի տերիտորիայում ԽՍՀՄ-ին անցնող յերկաթուղային ուղեմասերի արժեքը՝ 120 միլիոն Ֆիննական մարկի չափով:

ՀՈՒՎԱԾ II

Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետությունը յերևելով ԽՍՀՄ-ի և Ֆինլանդիայի անվտանգությունն ամբաստանելու փոխադարձ շահերից, համաձայնություն է հայտնում:

ա) 30 տարի ժամանակով Խորհրդային Միությանը վարձով տալ Խանկո թերակղզին և նրա շուրջը հինգ մղոն շառավիղով դեպի հարավ ու արևելք և յերեք մղոն շառավիղով դեպի արևմուտք ու հյուսիս դանվող ծովային տերիտորիան և հարավից ու արևելքից նրան հարող մի շարք կղզիներ, հարակից քարտեղի համաձայն:—այստեղ սահմանաձևված ծովային բազա ստեղծելու համար, վորն ընդունակ լինի ադրեսիայից պաշտպանելու Ֆիննական ծոցի մուտքը, յերևելով Ֆինլանդիայի ու ԽՍՀՄ-ի անվտանգությունն ապահովելու շահերից, ըստվորում ծովային բազայի պահպանման նպատակով Խորհրդային Միությանն իրավունք է վերապահվում այստեղ իր հաշիվին սահելու խիստ սահմանափակ քանակությամբ ցամաքային ու ողային զինված ուժեր, վորոնց առավելագույն թիվը վորոշվում է հատուկ համաձայնությունով:

բ) Խորհրդային Միությանը վաճառել Ֆիննական ծոցում դանվող Սուուրսաարի (Գոդլանդ), Սեյսկարի, Լավանոսարի, Տյուսերոսարի (Փոքր ու Մեծ), Կոյվիստո (Բյերկե) կղզիները, ինչպես նաև Ռիբաչի ու Սրեդնի թերակղզիների Ֆինլանդիային պատկանող մասերը՝ Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ափին, պայմանավորված դումարով՝ 300 միլիոն Ֆիննական մարկի չափով:

ՀՈՒՎԱԾ III

Խորհրդային Միությունը և Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետությունը պարտավորվում են միմյանց ցույց տալ ամեն տեսակի ողնություն, այդ թվում նաև սահմանական, Ֆինլանդիայի վրա հարձակվելու կամ հարձակ-

ման վտանգի դեպքում, ինչպես նաև այն դեպքում, յեթ յեվրոպական վորևե պետություն կողմից հարձակում կատարվի կամ հարձակման սպառնալիք ստեղծվի Խորհրդային Միության դեմ Ֆինլանդիայի տերիտորիայի վրայով:

ՀՈՒՎԱԾ IV

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են չկնքել վորևե դաշինք կամ մասնակցել այնպիսի կողմիցիաների, վորոնք սուղված են Պայմանավորվող կողմերից մեկի դեմ:

ՀՈՒՎԱԾ V

Պայմանավորվող կողմերը համաձայնվեցին ամենակարճ ժամկետում կնքել առևտրական Պայմանագիր և յերկու յերկըրների միջև տարեկան ապրանքաշրջանառությունը զգալիորեն ավելի վեր բարձրացնել 1927 թվի ապրանքաշրջանառությունից, յերբ այն հասնում էր առավելագույն թվի—800 միլիոն Ֆիննական մարկի:

ՀՈՒՎԱԾ VI

Խորհրդային Միությունը պարտավորվում է արտոնյալ պայմաններով ողնություն ցույց տալ Ֆինլանդական ժողովրդական Բանակին՝ զենքով և այլ սպասանյութերով:

ՀՈՒՎԱԾ VII

Սույն Պայմանագրի դործողության ժամկետը՝ նրա այն մասում, վորը վերաբերում է ԽՍՀՄ-ի ու Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետության միջև փոխադարձ ողնության պարտավորություններին (հոդվ. հոդվ. III—V)—25 տարի յե, ըստվորում յեթև հիշյալ ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ Պայմանավորվող կողմերից վորևե մեկն անհրաժեշտ չի համարի դենոնսացիայի յենթարկել սույն Պայմանագրով սահմանված ժամկետային վորոշումները, ապա այդ վորոշումներն ավտոմատիկ կերպով պահպանում են իրենց ուժը հաջորդ քսանհինգ տարվա ընթացքում ևս:

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում նրա ստորագրման արից և յենթակա յե հետագա ուստիՖրիկացիայի: Ռատիֆիկացիոն ակտերի փոխանակությունը կկատարվի հնարավորին չափ կարճ ժամկետում, Ֆինլանդիայի մայրաքաղաքում—Հելսինկի քաղաքում:

Սույն Պայմանագրերը կաղմված է յերկու բնագրից, ռուսերեն և ֆիններեն լեզուներով, Մոսկվա քաղաքում 1939 թվի դեկտեմբերի 2-ին:

Վ. ՄՈՂՈՏՈՎ

Ո. ԿՈՒՌՆՍԻՆՆԵՆ



Ֆինլանդիայի անցյալից	5
Դ՞նչ է ներկայացնում իրենից Ֆինլանդիան	15
Տերիտորիան, բնակչությունը	15
Ժողովրդական անտեսությունը, կուլտուրան և զինված ուժերը	17
Սպիտակ-Ֆինլանդիան՝ հակախորհրդային պրոֆոկացիաների բուն	28
Աշխատավորական ժողովրդական ճակատ	50
Ֆինլանդական դեմոկրատական հանրապետությունը	50
Ֆինլանդիայի ժողովրդական կառավարության ղեկավարացիան	61
Դիվանդակտական հարաբերությունների հաստատումը Սորհրդային Միության և Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետության միջև	66
Սորհրդային Միության և Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետության միջև փոխադարձ ոգնություն և բարեկամության պայմանագիր կնքելու մասին	67
Փոխադարձ ոգնություն և բարեկամության պայմանագիր Սորհրդային Միության և Ֆինլանդական Դեմոկրատական Հանրապետության միջև	67

Քարզմ. Գ. Ղուկասյան
Խմբագիր Ա. Ղազարյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Վ. Զիդեջյան
Կոնսրու սրբազրիչ Լ. Արսվյան

Գլավլիտի լիտգոր Վ. 1101 , հրատ. № 786
Պատվեր № 42, տիրած 6000
Թղթի չափսը $72 \times 105 \frac{1}{32}$ (66.880 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
 $2 \frac{1}{2}$ տպ. մամուլ, $1 \frac{1}{8}$ թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 7/II 1940 թ.
Ստորագրված է տպագրելու 2/III 1940 թ.
Գինը 50 Կ .

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Յեքեան, Ալլահիերդյան № 65



«Ազգային գրադարան»



NL0198556

ՆՈՐԱԵԳԻԱ

ԳԱՐԻՆԱԿԻ
ՅՈՒՎ

ՇԱԵՂԻԱ

ԿՄ

Հոյ
Հոյնիկալան
ՀԱՅՍ
(ԿԵԿՈՒՄՅԱՆՑԱԳ)

ՈՒՐՈՒՐ
(ՈՒՆԵՆՏՈՐԳ)

ԱՄ

ԿՅԱԿԵՐ
ԿԻՂ

ՔՈՒԿՈՒՆԵՐՈՒԿԻ

ՕՐՈՒՆՏԱ

ՆՈՐԱՆՏԱ

ԿՈՒՐՈՒՐ

ԱԲԳՈՒՆԵՐՈՒԿԻ

ՈՒՆԵՐՈՒՐ

ՍԻԿԿԵՐ
(Ս.ՄՈՒՆԵ)

ՄՈՐՏԱԿԱՆ
(ՍԵՐՈՒՐԳ)

ՅՅԱԿՈՒՄԻ
ՍԵՆԿՈՒՄԻ

ՊԵՏՐՈՋԱԿՈՒՄ

ՈՒՐՈՒՆՏ

ՍՈՒՐՈՒՐ
(ԱՐՈ)

ՔՐԻՆԱԿԱՆ ՀՈՅ
ՏԱԼԼԻՆ
(ՈՒՆԵՆԵ)

ՍԻՐՈՒՐ
(ԿՈՒՐՈՒՐԳ)

ԿՈՒՎՈՍԻ
(ԲՅԵՐԳ)

ԿԱՂԳԱՅԻ
ԿԻՂ

ԵՍՏՈՆԻԱ

ԼԵՆԻՆԳՐԱԴ

ՄԱՍՇՏԱԲ

0 25 50 75 100 125

ՊԱՅՄԱՆԱՆ ՆՏԱՍԵՐ
 ԿԱՐԵՆԿԱՆ ԱՄՍՆ ԱՅԼ
 ԿՐԵՐԿՈՒԹՅԱՆ ԿՐ
 ՖԻՆԱՆՅԻՆԵՆ Ե ԱՆԿՆԵՐ
 ՖԻՆԱՆՍՈՒՄԻ ԱՅԼ
 Կ ԵՐԿՐԿՈՒԹՅԱՆ ԿՐ
 ՄԱՍՏ-ԻՆ Ե ԱՆԿՆԵՐ
 — — — — — ԻՆ ԱՄՍՆԱՆԸ

Քարզմ. Գ. Ղուկասյան
Խմբագիր Ա. Ղազարյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեջյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լեզուր Վ. 1101, հրատ. № 786

Պատվեր № 42, տիրաժ 6000

Քղթի չափսը 72×105¹/₃₂ (66.880 տպ. նիշ 1 տպ. մամուլում)

2¹/₃ տպ. մամուլ, 1¹/₈ թերթ թուղթ

Հանձնվել է արտադրության 7/II 1940 թ.

Ստորագրված է տպագրելու 2/III 1940 թ.

Գինը 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տղարան, Յերևան, Ալլանիկերդյան № 65

«Ազգային գրադարան»



NL0198556

ԳԻՆԸ 50 Կ.

18276

М. МАРКОВ

ФИНЛЯНДИЯ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940